Kingdom of the Netherlands

# Ուսումնաօժանդակ ձեռնարկ ազգային փոքրամասնությունների հետ աշխատող մասնագետների համար.

*Մարդու իրավունքներ և հանրային քաղաքականություն*

# Բովանդակություն

Ներածություն .....3
**Մաս 1.**
Մարդու իրավունքներ..... 7
**Թեմա 1.1**
Երեխաների և կանանց իրավունքների էությունն ու պաշտպանության կարևորությունը .....14
**Թեմա 1.2**
Ազգային փոքրամասնությունների իրավունքների էությունն ու պաշտպանության կարևորությունը .....19
**Թեմա 1.3**
Եզդի կանանց իրավունքներն ու պաշտպանության առանձնահատկությունները ..... 30
**Մաս 2.**
Հանրային քաղաքականություն ..... 37
**Թեմա 2.1**
Ռազմավարություն..... 43
**Թեմա 2.2**
Մշտադիտարկում..... 56
**Թեմա 2.3**
Շահապաշտպանություն..... 66
**Հավելված 1.**
Ոչ ֆորմալ կրթության մեթոդներ և գործիքներ..... 82
**Հավելված 2.**
Իրավական հենանիշներ և խորհուրդներ թիրախ խմբի համար .....90
Օժանդակ գրականություն..... 97

# Ներածություն

«Մարդու իրավունքների եզդիական կենտրոնը» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2018 թվականին: Կազմակերպությունը մասնագիտացված է եզդիների և այլ ազգային ու էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում՝ Հայաստանում ժողովրդավարական և բազմամշակութային հասարակության զարգացման համար: Կազմակերպությունը շահագրգիռ կողմերի հետ իրականացնում է շահերի պաշտպանություն և մարդու իրավունքների ջատագովություն՝ ապահովելու ազգային փոքրամասնությունների արդյունավետ և բովանդակալից մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Դրա հետ մեկտեղ կազմակերպության մեդիա հարթակը (Xirat Media, xirat.com) լուսաբանում է ազգային փոքրամասնությունների, մասնավորապես՝ եզդիների կյանքը, նրանց յուրահատուկ մշակույթը, արվեստը, ավանդույթները, եզդի ժողովրդի սխրանքներն ու պատմությունը: Խիրատ Մեդիան միաժամանակ պատրաստում է մարդու իրավունքների, մասնավորապես՝ ազգային փոքրամասնությունների միջազգային իրավունքի մասին տեղեկատվական հոլովակներ և հաղորդումներ:

Կազմակերպության գործունեության առանցքային ուղղություններից մեկն էլ ազգային փոքրամասնությունների վնասակար ավանդույթների կամ սովորույթների դեմ պայքարն է:

Ներկա փուլում կազմակերպությունն ակտիվորեն աշխատում է եզդիական համայնքում տարածված վաղ ամուսնությունների բացասական պրակտիկայի կանխարգելման ուղղությամբ:

Սույն ձեռնարկը ստեղծվել է «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի» կողմից՝ **«Եզդիական համայնքի շրջանում վաղ ամուսնությունների կանխարգելման նպատակով մարզային մակարդակով հանրային ծառայողների կարողությունների զարգացում»** (“Enhancing the capacities of public servants on regional level for prevention of early marriages among the yezidi community”) ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է **Հայաստանում Նիդերլանդների Թագավորության** դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերում հանրային ծառայողների՝ **ոստիկանության ներկայացուցիչների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների և համայնքային սոցիալական աշխատողների** կարողությունները՝ կապված եզդիական համայնքում վաղ ամուսնությունների կանխարգելման և դեպքերի հետ աշխատանքի առանձնահատկությունների հետ: Այս նախագիծն ինքնին, **Հայաստանում Նիդերլանդների Թագավորության Դեսպանատան** ֆինանսական աջակցությամբ «Մարդու իրավունքների եզդիական կենտրոնիե կողմից ավելի վաղ իրականացված **«Վաղ ամուսնությունների կանխարգելումը որոշում կայացնողների և եզդիական համայնքի համագործակցության միջոցով»**

(“Preventing early marriages through cooperation of yezidi community and decision makers”) ծրագրի շարունակությունն է, որի շրջանակներում մշակվել է **եզդի համայնքում վաղ ամուսնությունների կանխարգելման այլընտրանքային ռազմավարություն 2022-2026թթ. փաստաթուղթը:** Նշյալ ռազմավարությունն, որի կազմման աշխատանքներին ներգրավված են եղել նաև որոշում կայացնող պետական կառույցները և որի իրականացման շուրջ կա արդյունավետ համագործակցություն և համաձայնություն վերջիններիս հետ, ամբողջությամբ ներառված է նաև սույն ձեռնարկում:

Սույն ձեռնարկի գլխավոր նպատակն է տալ անհրաժեշտ տեղեկություններ և գիտելիքներ, թե ինչպես կառուցել վերապատրաստումներ կամ դասընթացներ հանրային ծառայողների համար, որոնք իրենց աշխատանքային գործունեության բերումով առնչություն են ունենում եզդիական համայնքում առկա վաղ ամուսնությունների հիմնախնդրի հետ և ստացած գիտելիքների և հմտությունների հիման վրա իրենց աշխատանքը հնարավորինս տեղեկացված և արդյունավետ կդարձնեն: Ձեռնարկն օգտակար է նաև եզդիական համայնքում ծրագրեր իրականացնող ՔՀԿ-ների և անձանց համար: Ձեռնարկի բովանդակությունը և դրանում տեղ գտած տեսակետները «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» իրավապաշտպան ՀԿ-ինն են և կարող են չհամընկնել Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան տեսակետներին:

# ՄԱՍ 1

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

**Նպատակ՝** ծանոթացնել մարդու իրավունքների ստեղծման համառոտ պատմությանը, ներկայացնել հիմնական սկզբունքներն ու աղբյուրները:

Մարդու իրավունքները՝ որպես իրավունքի ճյուղ, սահմանում է ստանդարտներ, որով ընդունվում և պաշտպանվում են բոլոր մարդկանց *արժանապատվությունն ու իրավունքները*: Մարդու իրավունքները կանոնակարգում է, թե ինչպես պետք է մարդիկ ապրեն հասարակությունում և գոյակցեն միմյանց հետ, կարգավորում է մարդկանց հարաբերությունները պետության հետ, ինչպես նաև նրանց հանդեպ պետության պարտավորությունները:[1]

Արժանապատվությունը այն համոզմունքն է, որ բոլոր մարդիկ ունեն առանձնահատուկ արժեք, որը կապված է նրանց մարդկային բնույթի հետ: Այլ կերպ ասած՝ մարդու արժեքը հարգանք է ակնկալում կամ պահանջում:[2] Արժանապատվությունը չի կապվում ռասսայի կամ էթնիկական պատկանելիության, գույնի, սեռի, գենդերային կողմնորոշման, հաշմանդամության, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ծննդյան կամ այլ կարգավիճակի հետ:

---

*1 Ինչ են իրենցից ներկայացնում մարդու իրավունքները, www.unicef.org/armenia/*
*2 Human Dignity and Human Rights, p. 10, www.legal-tools.org/doc/e80bda/pdf/*

Կարևոր է նաև նշել, որ մարդու իրավունքները *համընդհանուր* են, այսինքն աշխարհի ցանկացած վայրում գտնվող բոլոր մարդիկ օժտված են դրանցով, և *անքակտելի* են, այսինքն որևէ մեկը չի կարող ինքնակամ հրաժարվել, և ոչ էլ նրանից կարող են խլել:

**Վարժություն**

Առաջարկում ենք մարդու իրավունքները սահմանելիս կիրառել մտագրոհ: Հնարավոր է կազմակերպել ինչպես գրատախտակին/ֆլիպչարթին նշումների միջոցով, այնպես էլ թվային տարբերակով (mentimeter.com):

## Պատմական ակնարկ

Մարդու իրավունքները նոր գաղափար չեն, դրանք հայտնի են դեռևս Հին Հռոմից, դրանք ամրագրում էին օրենքի ու օրինականության արժեքն ու կարևորությունը: Մարդու իրավունքների պաշտպանության մասին զրույցը Հայաստանում սկսվել է ավելի վաղ, քան անգամ Եվրոպայում: Դրա լավագույն վկայությունը Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» է (գրված՝ 12-րդ, օրենքի մեջ մտած՝ 13-րդ դար): Ըստ էության Գոշը այս փաստաթղթով հիմք դրեց Հայաստանում դատական համակարգի և դատարանակազմության ստեղծմանը:

Փաստաթղթում շատ մանրամասն անդրադառնալով սոցիալական և կրոնական պատճառներին՝ առանձին հատվածով խոսվում է նաև մարդու իրավունքների դերի և կարևորության մասին: Փաստաթղթի հիմքում դրված է այն, որ մարդը գերագույն արժեք է և շեշտում է, որ ժողովրդավարությունը հիմնված է մարդու իրավունքների պահպանման և գերադասման վրա: Գոշը դրեց այն ավելի բարձր հարթության վրա և ձևակերպեց բնական իրավունքը՝ որպես ի սկզբանէ Աստծո կողմից ստացված ճշմարտություն, որը պետք է պահպանել և փոխանցել սերնդեսերունդ: Ըստ նրա, մարդուց է կախված արդարացի վարվելը և առաքինի լինելը, իսկ իրենց բնությամբ մարդիկ ազատ են և հավասար: Նա դատապարտում էր բռնությունը կանանց նկատմամբ: Այսպիսով՝ Գոշը մարդկանց հավասարության գաղափարը փոխադրեց օրենսդրական դաշտ:

Մարդու իրավունքերի հիմնական հասկացությունը զարգացել է 18-19-րդ դարերում և այսօր ավելի կայունացած է: Ստեղծվել է համընդհանուր պատկերացում այդ գաղափարի շուրջ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդգծվեց համընդհանուր փաստաթուղթ ստեղծելու կարիքը: Արդյունքում կյանքի կոչվեց մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.), որը բաղկացած է 30 հոդվածներից և սահմանում է բոլոր հիմնական մարդու իրավունքները:[3]

*3 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, www.ohchr.org/sites/*

Այն ներառում է ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական և մշակութային իրավունքները, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքները:

Այդ ժամանակից ի վեր՝ ՄԱԿ-ի շրջանակում ընդունվել են մարդու իրավունքների վերաբերյալ բազմաթիվ միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր, որոնք ունեն պարտադիր իրավաբանական ուժ դրանք վավերացրած պետություններում, այդ թվում[4]՝

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (1966)[5]
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր (1976)[6]
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա (1984)[7]
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1989)[8]
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (1965)[9]

---

*4 Մարդու իրավունքների միջազգային շրջանակ, www.unicef.org/armenia/*

*5 Միջազգային դաշնագիր՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, www.arlis.am*

*6 Տնտեսական սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, www.arlis.am*

*7 Կոնվենցիա՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ, www.arlis.am*

*8 Կոնվենցիա՝ Երեխայի իրավունքների մասին, www.arlis.am*

*9 Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, www.irtek.am*

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (1979)[10]

Աշխարհի յուրաքանչյուր երկիր վավերացրել է վերոնշյալ կոնվենցիաներից առնվազն մեկը, իսկ շատ երկրներ վավերացրել են բոլորը, այդ թվում և Հայաստանը: Այս պայմանագրերը կարևոր գործիքներ են՝ երկրներին պատասխանատվության ենթարկելու մարդու իրավունքների խախտման համար:

Կարևոր է նշել, որ որևէ միջազգային պայմանագրի (կոնվենցիա) ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է, որ պետությունը ստորագրի և վավերացնի տվյալ փաստաթուղթը: Այս գործընթացը հնարավոր է կատարել միաժամանակ կամ փուլային, և որևէ ժամկետային սահմանափակում չկա: Մարդու իրավունքների տեսանկյունից կարևոր է այս երկու գործընթացները տարանջատել, քանի որ պայմանագրի ստորագրմամբ պետությունը ստանձնում է բացասական պարտավորություն, իսկ վավերացմամբ՝ դրական պարտավորություն կատարելու պայմանագրի պահանջները: Բացասական պարտավորությունը որևէ ակտիվ միջոցառում չի ենթադրում պետության կողմից պարտավորության կատարման, այլ ի ցույց է դնում պետության պատրաստակամությունը չանելու մի բան, որ կհակասի պայմանագրին, մինչդեռ դրական պարտավորությունը ենթադրում է, որ պետությունը

*10 Կոնվենցիա՝ կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, www.arlis.am*

պետք է որդեգրի հստակ գործողություններ, որոնք պետք է օժանդակեն պայմանագրի դրույթների իրականացմանը:

Այս շրջանակի ընկալումը կարևոր է երեխաների և կանանց իրավունքների խրախուսման, պաշտպանության և իրականացման համար, քանի որ ուղղակիորեն առնչվում է Հայաստանում եզդիական համայնքում հիմնախդնիրներից մեկի՝ վաղամունության հիմնախնդրի հետ:

## Վարժություն

Առաջարկում ենք փոքր խմբերում հանձնարարել ուսումնասիրել այս փաստաթղթերը: Թիմերի կազմը պետք է լինի 4-7: Կախված մասնակիցների պատրաստվածությունից և պայմաններից կա՛մ անհրաժեշտ է տրամադրել փաստաթղթերի տեքստը (թվային կամ թղթային), կա՛մ հանձնարարել փոքր հետազոտությունը կատարել որևէ փաստաթղթի վերաբերյալ: Ըստ ժամային պլանավորման կարելի է հատկացնել 15-30 րոպե այս հանձնարարությանը, որից հետո յուրաքանչյուր թիմ արդյունքներով կկիսվի մեծ խմբի հետ:
Եթե առկա են մասնագետներ, յուրաքանչյուր թիմին կցել մեկ մասնագետի, որը կներկայացնի փաստաթուղթը, ապա աշխարհիկ սրճարանի մեթոդով կազմակերպել շրջապտույտ:

Այսպես՝ մասնակցային և ինտերակտիվ տարբերակով հնարավոր է ներկայացնել բոլոր փաստաթղթերի բովանդակությունը:

# Թեմա 1.1 Երեխաների և կանանց իրավունքների էությունն ու պաշտպանության կարևորությունը

**Նպատակ.** ներկայացնել մարդու իրավունքների առանցքային ուղղությունները՝ ըստ տարբեր տեսակավորումների, շեշտադրել երեխաների և կանանց իրավունքների կարևորությունը:

Մարդու իրավունքների տարբեր ճյուղեր ի հայտ են եկել ժամանակի ընթացքում և զարգացման փուլային դրսևորում ստացել: Այսպես՝ մարդու իրավունքների դասակարգման մի շարք տեսակավորումներ կան, որոնցից կարող ենք առանձնացնել՝ ըստ սերունդների (ժամանակային բաժանում) և ըստ թեմայի (բովանդակային տեսակավորում):

1979 թվականին չեխ Քարել Վասակը, հիմնվելով Եվրոպական օրենքների զարգացման վրա, առանձնացրեց մարդու իրավունքների երեք սերունդները՝

1) Քաղաքական և քաղաքացիական իրավունքներ
2) Տնտեսական, հասարակական և մշակութային իրավունքներ
3) Սոլիդարության իրավունքներ (փափուկ օրենքներ, կանաչ իրավունքներ)

Ըստ բովանդակային առանձնահատկությունների հնարավոր

է առանձնացնել մարդու իրավունքների հետևյալ խմբերը՝

1) Բնական կամ ֆունդամենտալ իրավունքներ (օրինակ՝ կյանքի, ազատության իրավունքներ և այլն)
2) Քաղաքացիական իրավունքներ (օրինակ՝ մտքի, խղճի, դավանանքի, խոսքի ազատության իրավունքներ և այլն)
3) Քաղաքական իրավունքներ (օրինակ՝ ընտրելու և ընտրվելու, հավաքների ազատության իրավունք և այլն)
4) Տնտեսական և սոցիալական իրավունքներ (աշխատելու, բնակարանային իրավունքներ և այլն)
5) Մշակութային իրավունքներ (օրինակ՝ ստեղծագործելու, հեղինակային իրավունք և այլն)

Իրավունքների բովանդակային տեսակավորումը զարգացող աշխարհում նաև միտում ունի ընդլայնվելու՝ ընգրկելով շրջանակներ, որ նախկինում ակտուալ չեն եղել, ինչպես օրինակ՝ ինտերնետի հասանելիության իրավունք, թվային անվտանգության իրավունք և այլն:

Հնարավոր է տարբերակել նաև մարդու իրավունքները՝ ըստ անհատական և կոլեկտիվ (խմբային) իրավունքների տեսակավորման: Այսկերպ առանաձնացնում ենք նաև հատուկ խմբերին բնորոշ իրավունքներ, ինչպես օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ, ԼԳԲՏ+ անձանց իրավունքներ և այլն:

Ձեռնարկի հաջորդ մասերում կխոսենք երեխաների, կանանց և ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին:

**Երեխաների իրավունքները** սահմանում են, որ երեխաները և երիտասարդները օժտված են միևնույն ընդհանուր իրավունքներով, ինչ մեծահասակները, ինչպես նաև հատուկ իրավունքներ, որոնցով ճանաչվում են նրանց հատուկ կարիքները: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան սահմանում է իրավունքներ, որոնք պետք է իրացվեն, որպեսզի երեխաները զարգացնեն իրենց ողջ ներուժը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ընդգծվում է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության ու օժանդակության իրավունք (հոդված 25): Երեխաների համար առանձնահատուկ կերպով հոգ տանելու, նրանց աջակցելու ու պաշտպանելու անհրաժեշտությունը գիտակցվել էր նաև ավելի վաղ: 1924 թվականին Ազգերի լիգան ընդունել էր «Երեխայի իրավունքների մասին» հռչակագիրը, որը հայտնի է որպես Ժնևի հռչակագիր: Այս հռչակագրով առաջին անգամ ճանաչվեց և հաստատվեց, որ երեխաների համար գոյություն ունեն հատուկ իրավունքներ:[11]

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Երեխայի իրավունքների հռչակագիրը» (1959թ.) կազմված է 10 սկզբունքից, որոնցում ձևակերպված են երեխաների հատուկ պաշտպանության, խտրականությունից զերծ մնալու, անվան ու ազգության, կրթության, ժամանցի, աջակցող միջավայրի ու առողջության պահպանման, ներդաշնակ զարգացման, անտեսումից, դաժան վերաբերմունքից, շահագործումից,

*11 Եկեք սովորենք երեխայի իրավունքները, www.unicef.org/armenia/media/pdf*

թրաֆիքինգից և աշխատանքի վատթարագույն ձևերից զերծ լինելու, հաշմանդամություն ունեցող երեխաների համար հատուկ կրթության, խնամքի ու աջակցության իրավունքները:

ՄԱԿ-ը 1989թ.-ին ընդունեց «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ 1990 թվականին: Կոնվենցիան միջազգայնորեն ճանաչված առաջին փաստաթուղթն է, որով ամրագրվում է երեխայի՝ որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակը: Կոնվենցիայում ամրագրված իրավունքները հարմարեցված են երեխայի կարիքներին, հաշվի են առնում նրա խոցելիությունն ու զարգացման անհրաժեշտությունը:[12]

Յունիսեֆը երեխաների իրավունքների կարևորությունը սահմանելու համար տվել է հետևյալ պնդումները[13]՝

- Երեխաները կյանքն սկսում են որպես միանգամայն կախյալ էակներ
- Կառավարության գործողությունները կամ անգործությունը երեխաների վրա ազդում են առավել զգալի, քան հասարակության որևէ այլ խմբի վրա
- Երեխաների տեսակետները պետք է լսվեն և հաշվի առնվեն քաղաքական գործընթացներում
- Հասարակությունում տեղի ունեցող բազմաթիվ

---

*12 Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, www.arlis.am/documentview*

*13 Երեխայի իրավունքներ. ինչո՞ւ են դրանք կարևոր, www.unicef.org/armenia/*

փոփոխություններ անհամաչափ, հաճախ՝ բացասական ներգործություն են ունենում երեխաների վրա

- Երեխաների առողջ զարգացումը վճռորոշ նշանակություն ունի ցանկացած հասարակության ապագա բարեկեցության հարցում
- Երեխաների հարցում թերացող հասարակությունը խիստ թանկ է վճարում դրա դիմաց:

**<u>Կանանց իրավունքները</u>** ամբողջ աշխարհի կանանց ու աղջիկներին վերագրվող իրավունքներ ու իրավասություններ են, որոնք հիմք են հանդիսացել 19-րդ դարում կանանց իրավունքների շարժման ու 20-րդ դարում ֆեմինիստական շարժման համար: Որոշ երկրներում այս իրավունքներն ամրագրված են օրենքով, տեղական սովորույթներով ու վարվեցողությամբ, մինչդեռ այլ երկրներում դրանք անտեսված ու ճնշված են:

1993 թվականին ՀՀ-ն վավերացրեց ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան և ստանձնեց կանանց նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորման բացառման, ազգային օրենսդրությամբ տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքի ամրագրման և երաշխավորման պարտավորությունները: Կանանց իրավունքներին առնչվող թեմաներն են՝ մարմնական ամբողջականության

ու ինքնուրույնության իրավունքը, սեռական բռնությունից զերծ լինելու իրավունքը, կանանց ընտրական իրավունքը, պետական պաշտոն զբաղեցնելու իրավունքը, իրավական պայմանագրեր կնքելու իրավունքը, ընտանեկան իրավունքը, աշխատելու իրավունքը, արդար աշխատավարձի իրավունքը, վերարտադրողական իրավունքները, սեփականության իրավունքը և կրթություն ստանալու իրավունքը:

Հայաստանը կանանց իրավունքների պաշտպանության բնագավառում վավերացրել է նաև այնպիսի կարևոր միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են ՄԱԿ-ի «Կանանց քաղաքական իրավունքների մասին», Եվրոպայի խորհրդի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին», «Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության մասին» և այլն:

## Վարժություն

Առաջարկվում է մասնակիցներին երկու թիմերի բաժանել, որոնցից յուրաքանչյուրին կհանձնարարվի ներկայացնել հիմնավորումներ/պնդումներ առ այն, որ անհրաժեշտ է մարդու իրավունքների շարքում առանձնացնել երեխաների/կանանց իրավունքները: Պնդումները պետք է պատասխանեն մեր հասարակությունում տարածված միֆերին և կարծրատիպերին, այսպես հանձնարարության մեկնարկից առաջ

կարող ենք խմբից վերհանել 5-10 կարծրատիպ/միֆ, որոնց էլ պետք է արձագանքել վարժության երկրորդ հատվածում: Խորհուրդ է տրվում պնդումները ձևակերպել հետևյալ տրամաբանությամբ՝ 1) հայտարարություն 2) ապացույց (փաստ, վիճակագրություն, փորձ և այլն), 3) ուղերձ:
Այս վարժությունը հնարավորություն կտա մասնակիցներին ինքնուրույն ձևակերպել հիմնավորումներ, և հակադարձել տարածված թյուրընկալումներին:

Ամփոփելով՝ նշենք, որ մարդու իրավունքները որպես մեկ ամբողջություն առանձնացված չեն հասարակական, պետական, տնտեսական գործընթացներից, այլ շատ ուղղակիորեն փոխազդեցության մեջ են գտնվում: Անհնար է խոսել մարդու իրավունքների մասին առանց շոշափելու ժողովրդավարության, քաղաքականության, մշակույթի, կոնֆլիկտի ու խաղաղության և շատ ու շատ այլ թեմաների վերաբերյալ հարցերը:

# Թեմա 1.2 Ազգային փոքրամասնությունների իրավունքների էությունն ու պաշտպանության կարևորությունը

**Նպատակը՝** *Ծանոթացնել ազգային փոքրամասնությունների իրավունքների էությանը և ամրապնդել այն համոզմունքը, թե ինչո՞ւ է հատկապես նրանց իրավունքների պաշտպանությունը կարևոր:*

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների անբաժանելի մաս է: Սովորաբար «ազգային փոքրամասնություններե տերմինն օգտագործելիս նկատի ունենք անձանց, ովքեր տարբերվում են երկրում ապրող հիմնական էթնիկ խմբից իրենց *ազգային, կրոնական լեզվական պատկանելիությամբ*:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության նպատակը նրանց համար ինքնության պահպանման և զարգացման համար հավասար հնարավորությունների ապահովումը, նրանց նկատմամբ խտրականության բացառումն ու նրանց ներառականությունը հասարակական, քաղաքական, սոցիալ տնտեսական կյանքում ապահովելն է:

Ազգային փոքրամասնությունների իրավունքները անբաժանելի մաս դիտարկելիս պետք է հաշվի առնենք, որ այս հավելյալ հնարավորությունների ապահովումը գործում է ի

հավելումն օրենքով նախատեսված կանոնակարգի:

Սրա նպատակը ոչ թե մի խմբի նկատմամբ դրական վերաբերմունք ցուցաբերելն է, այլ բնական պատճառներով ավելի խոցելի դիրքում հայտնված խմբերին հավասար հնարավորություններ ընձեռելը: Օրինակ՝ բոլորն ունեն կրթության իրավունք, սակայն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար ի հավելումն հանրակրթության մասին օրենքով սահմանվող կարգավորումների՝ ստեղծվում են այլ մեխանիզմներ ևս՝ նրանց մայրենի լեզվով կրթությունն ապահովելու նպատակով:

Նշված հնարավորությունները թիրախային խմբին հասանելի դարձնելու նպատակով պետությունները ազգային փոքրամասնություններին տալիս են հատուկ կարգավիճակ: Ազգային փոքրամասնության անդամ լինելը կամընտրական իրավունք է, և անձը համարվում է այս կամ այն խմբի անդամ[14], եթե ինքն իրեն համարում է այդպիսին:

---

*14 Ըստ ՀՀ ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագծի 4-րդ հոդվածի առաջին կետի՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող անձն ունի այդպիսին համարվելու կամ չհամարվելու իրավունք: Այդ ընտրությունը, ինչպես նաև դրա հետ կապված իրավունքների իրականացումը չպետք է հանգեցնեն այդ անձի համար անբարենպաստ հետևանքների», www.e-draft.am*

## Վարժություն

*Վարժության նպատակը՝* Թիրախային խմբի շրջանում ամրապնդել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության կարևորությունը

Վարժության տեսակը՝ Մտագրոհ, խմբային քննարկում և այլ մեթոդներ, որոնք հնարավորություն կտան լսարանից հավաքել կարծիքներ ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին և դասընթացավարների կողմից կհամակարգվեն՝ արդյունքում հասկանալի դարձնելով այս իրավունքների կարևորությունը: Հարցերը, որոնք կարող են օգտագործվել վարժության ժամանակ կարող են ներառել՝ ինչ իրավունքներ ունեն Հայաստանում ազգային փոքրամասնությունները, ինչո՞ւ է պետությունը նրանց համար առանձին, հավելյալ հնարավորություններ սահմանել, ինչ կլիներ, եթե սահմանված չլինեին այս հնարավորությունները (չսահմանափակվել միայն նշված հարցերով), որոնք հնարավորություն կտան հասկանալ իրավունքների՝ որպես հավասարությանն ուղղված հավելյալ հնարավորություն ապահովման միջոց լինելը:

# Պատմական ակնարկ

Ազգային փոքրամասնություն տերմինն աշխարհում առաջացել է ազգային պետությունների ձևավորմանը զուգահեռ: Կայսրությունների գոյության ժամանակահատվածում իշխանությունը իշխում էր ոչ թե ինչ-որ էթնիկ խմբի անունից, այլ կառավարող դինաստիայի: Նշված պարագայում ազգային փոքրամասնություն տերմին գոյություն չուներ, քանի որ որպես այդպիսին չկար ազգային մեծամասնություն:

Ազգային պետությունների ստեղծմանը զուգահեռ փոխվեց նաև պետությունների տրամաբանությունը: Յուրաքանչյուր ազգային երկրի իշխանություն իշխում էր տվյալ երկրի տիտղոսակիր ազգի անունից (Ռումինայի իշխանությունը՝ էթնիկ ռումինացիների, Հունգարիայի իշխանությունը՝ էթնիկ հունգարացիների և այլն):

Նշված պայմաններում հարց է առաջանում՝ այդ դեպքում ո՞րն է այն էթնիկ  խմբերի դերը նշված պետության մեջ, որոնք դարերով բնակվել են նշված տարածքներում և արդյո՞ք մեծամասնության անունից հանդես եկող իշխանությունը լեգիտիմ իրավունք ունի իշխել այլ խմբերի վրա[15]:

Ազգային պետությունների ստեղծմանը զուգահեռ մեծ թափ առան նաև  էթնիկ կոնֆլիկտները, որոնց արդյունքում երկրում ազգային փոքրամասնությունները դիտարկվում էին

*15 Minority Rights,Will Kymlicka, www.academia.edu/30060102/Minority_Rights_2018_*

որպես խնդիր իշխանության լեգիտիմության, ազգային անվտանգության համար:

Երբ ազգային փոքրամասնությունների խնդիրը մի շարք երկրներում դարձավ մարտահրավեր, պետությունների կողմից առաջին արձագանքը այդ խնդրին ուժային դիրքերից հանդես գալն էր: Պետությունները փորձում էին ուժեղացնել այն վարչական լծակները, որոնց միջոցով հնարավոր կլիներ թուլացնել ազգային փոքրամասնություններին՝ վերացնելով ներպետական խաղաղությանը սպառնացող վտանգները:Այս ժամանակահատվածում նույնիսկ պետությունների միջև տեղի ունեցան բնակչության փոխանակումներ,որի ժամանակ յուրաքանչյուր պետություն իր էթնիկ խմբի ներկ՛ացուցիչներին տեղափոխում էր իր երկիր:

Հեղափոխություններով, ապագաղութացման շարժումներով ու շարունակվող էթնիկ կոնֆլիկտներով պայմանավորված՝ մարդու իրավունքների առաջընթացին և միջազգային իրավական փաստաթղթերի ընդունմանը զուգահեռ զարգացավ նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների ոլորտը, քանի որ ազգային փոքրամասնությունների նկատմամբ եղած վերաբերմունքն ու սահմանափակող քաղաքականությունն այլևս չէր համապատասխանում մարդու իրավունքների մասին զարգացող պատկերացումներին:

Շարունակվող էթնիկ հիմքով կոնֆլիկտները ցույց տվեցին, որ առկա ազգային փոքրամասնություններին ճնշելու

քաղաքականությունը ոչ միայն չի կանխարգելում էթնիկ հակամարտությունները, այլև ստեղծում է նոր խնդիրներ հասարակությունների զարգացման համար:

Սա է պատճառը, որ 1960-ական և 1970-ական թվականներին մի շարք երկրներ ստեղծին առանձին քաղաքականություններ և մոտեցումներ՝ ուղված տարբեր էթնիկ, կրոնական, լեզվական փոքրամասնությունների համար հավասարության և երկրում բազմազանության ապահովմանը: Ընդ որում այս շարժումները սկսվելով տեղական մակարդակից, մեծ տարածում գտան միջազգային գիտական և իրավական հարթությունում: Տեղական մակարդակում ստեղծվեցին բազմամշակութային հասարակություն ունենալուն ուղված քաղաքականություններ, որոնք ոչ միայն ընդունում էին երկրում ազգային փոքրամասնությունների գոյությունը, այլև կարևորում էին նրանց ինքնությունը: Այս գաղափարներն աստիճանաբար տարածվեցին աշխարհում և ստացան միջազգային բնույթ՝ նպատակ ունենալով պաշտպանել ազգային փոքրամասնությունների իրավունքները ոչ միայն զարգացած երկրներում, այլև այն երկրներում, որոնք նոր են անկախացել, ունեն երիտասարդ ժողովրդավարություն, կամ ստեղծվել են այնպիսի տարածքների վրա, որտեղ առկա են մի քանի էթնիկ խմբերից բաղկացած բնակչություն:

Այս շարժումն ավելի ակտիվացավ 1990-ական թվականներին, երբ ընդունվեցին ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հետևյալ միջազգային փաստաթղթերը՝

- Ազգային, կրոնական, լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի հռչակագիրը (1992թ)

  *Հռչակագիրը ունի խորհրդատվական նշանակություն և դարձավ տարբեր մայրցամաքներում միջազգային կազմակերպությունների կողմից պարտադիր կատարման բնույթ ունեցող փաստաթղթերի ստեղծման սկզբնաղբյուր*
- Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի հռչակագիրը (2007)
- Եվրոպայի խորհրդի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին խարտիան (1992)

  *Լեզուների խարտիան վավերացնող երկրները նշում են իրենց երկրում գոյություն ունեցող լեզվական փոքրամասնություններին և պարտավորվում են ապահովել նրանց լեզվի պահպանությունն ու զարգացումը իրենց պետական տարածքում:Այս փաստաթղթով պետությունները պարտավորվում են պայմաններ ստեղծել փոքրամասնությունների համար իրենց բնակության տարածքներն անվանել իրենց լեզվով, օգտագործել իրենց լեզուն պետական մարմինների հետ շփումներում , խրախուսել լրատվամիջոցներով այդ լեզուների օգտագործումը*
- Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ շրջանակային կոնվենցիան (1995)

*Այս փաստաթղթով սահմանվում են, թե ովքեր են ազգային փոքրամասնությունները, ամրագրվում է նրանց հանդեպ խտրականության բացառումը,սահմանվում են լեզվական, կրթական, քաղաքական ,հասարակական իրավունքները*

- ԵԱՀԿ Լունդի առաջարկությունները ազգային փոքրամասնությունների արդյունավետ և իմաստալից մասնակցության մասին (1999)

  *ԵԱՀԿ Ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն հանձնակատարի կողմից Շվեդիայի Լունդ քաղաքում մշակված առաջարկությունները միտված են երկրի հասարակական ,քաղաքական(ներառյալ ընտրովի և նշանակովի պաշտոններում), տնտեսական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ և իմաստալից մասնակցության կայացմանը*

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի համընդհանուր հռչակագիրը մշակութային բազմազանության վերաբերյալ (2001)

## Վարժություն

Վարժության նպատակն է դասընթացի մասնակիցներին տեղեկացնել ազգային փոքրամասնությունների իրավունքների զարգացման պատմության վերաբերյալ, և ամրապնդել այն գաղափարը, որ ազգային փոքրամասնությունների խնդիրների լուծման ամենաարդյունավետ ճանապարհը միջազգային իրավական փաստաթղթերի հիման վրա նրանց կրթական, սոցիալական, քաղաքական իրավունքների պաշտպանությունն, նրանց նկատմամբ խտրականության բացառումն ու երկրի հասարակական, քաղաքական կյանքում նրանց արդյունավետ և իմաստալից ներառականությունն է:

***Վարժության նկարագրությունը***

*Վարժությունն իրենից ներկայացնում է իրավիճակային խնդիր, որի լուծման արդյունքում դասընթացի մասնակիցները կկարողանան ինքնուրույն առաջարկել սցենարներ պայմանականորեն տրված իրավիճակում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Առաջարկվում է վարժությունն անցկացնել խմբերի միջոցով և յուրաքանչյուր խումբ դուրս բերի իրավիճակային խնդրի վերաբերյալ իր պատկերացրած լուծումները:*

## *Իրավիճակ*

Խորվաթիայի խորհրդարանի առջև հավաքված ալբանացիները, բոսնիացիները և հրեաները և ռոմաները բողոքում են, որ երկրի խորհրդարանը չի ընդունում այնպիսի օրենքներ, որոնք կերաշխավորեն ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանությունն ու զարգացումը, կերաշխավորեն կրթական իրավունքների իրացումը և կբացառեն խտրականությունը:

Ալբանացիների ներկայացուցիչները պնդում են, որ չնայած Խորվաթիայում իրենք ապրում են ակնախությունից ի վեր, իրենց լեզուն հետզհետե մոռացվում է: Ալբաներենի ուսուցումը երկրում տեղի է ունենում դպրոցներին կից խմբակների միջոցով միայն, որտեղ ուսուցիչները լեզվի մասնագետներ չեն: Ցուցարարը նաև հավելում է, որ երկրում ալբաներենի օգտագործման որևէ բնագավառ չկա, չկան իրենց լեզվով հեռուստաալիքեր և ռադիոհաղորդումներ, նույնիսկ իրենց համայնքների ցուցանակները իրենց լեզվով չեն:

Ռոմա փոքրամասնության ներկայացուցիչները պնդում են, որ իրենց համայնքի աղջիկներն ամուսնանում են 13-15 տարեկանում, որի պատճառով խախտվում է իրենց կրթության իրավունքն ու համայնքը չի զարգանում: Չնայած խորհրդարանի խոսնակը նախկինում պնդել էր, որ դա իրենց ազգային ավանդույթն է, ռոմա փոքրամասնության ներկայացուցիչը պնդում է, որ պետությունը պիտի երաշխավորի, որ երկրում ոչ մի երեխայի իրավունք չպետք է խախտվի, և անկախ

իրենց ազգային պատկանելիությունից իրենք էլ պիտի հնարավորություն ունենան օգտվել երկրում առկա օրենսդրության հնարավորություններից:

Հրեա փոքրամասնության ներկայացուցիչը պնդում է, որ թեպետ հրեաները երկրի բնակչության 2 տոկոսն են կազմում, իրենց ազգի ներկայացուցիչները ներկայացված չեն տեղական ինքնակառավարման մարմիններում, մարզպետարաններում և ոստիկանությունում:

## Ինչպե՞ս կարձագանքեիք նման պահանջներին

Ամփոփելով մարդու իրավուքնքների թեման՝ կարևոր է նշել, որ մարդու իրավունքների ամբողջության մեջ որևէ առանձին խմբի կամ առանձնահատուկ բովանդակությամբ իրավունք գերակա չէ մեկ այլ իրավունքների փնջի նկատմամբ: Միևնույն ժամանակ մարդու իրավունքները պետք է դիտարկել միջառարկայական մոտեցմամբ, քանի որ երբեմն մեկ դեպքը միաժամանակ հղում է կատարում իրավունքների տարբեր խմբերի, իսկ պետության պարտավորությունն է հարգել և պաշտպանել բոլոր անձանց բոլոր իրավունքները առանց բացառության:

## Թեմա 1.3 Եզդի կանանց իրավունքներն ու պաշտպանության առանձնահատկությունները

Խոսելով եզդի կանանց իրավունքներից, հարկ է նշել, որ եզդիական համայնքի փակ լինելը, եզդիների վերաբերյալ հանրությանը հասանելի տեղեկությունների աղճատված ու իրարամերժ լինելը, պետականության բացակայությունն ու ձուլման շարունակական սպառնալիքը, տարբեր մշակութային և կրոնական միջավայրերում ապրելը եզդի կանանց ավելի խոցելի է դարձրել, հատկապես, երբ խոսքը վերաբերում է նրանց՝ հասարակական-քաղաքական կյանքին մասնկացությանը: Թեև պատմության մեջ քիչ չեն եղել եզդի կանայք, որոնք իրենց տոհմերում ղեկավար կամ հատուկ դիրքեր են զբաղեցրել, սակայն նրանց իրավունքներն ու ազատություններն, այնուամենայնիվ, հարաբերական են եղել: Հիմնական պատճառը ավանդական կենսակերպն ու կրթության բացակայությունն էր:[16]

Երբ խոսքը վերաբերում է եզդի կանանց, կարևոր է հասկանալ, որ նրանց կարողություններն ու հնարավորությունները տարբերվում են «արևմտյան» կնոջ կարողություններից, քանի որ եզդի կանայք սերտ կապեր ու կախում ունեն իրենց համայնքի հետ:

---

*16 Ձեռնարկ՝ Հայաստանի եզդիաբնակ համայնքներում ծրագրեր իրականացնող ՀԿ-ների համար. Մշակույթ, իրավունք, օրենսդրություն: Մարդու իրավունքների եզդիական կենտրոն, 2020*

Այս դեպքում նրանց հետ աշխատելու համար ավելի լավ է ընտրել բազմաշերտ մոտեցում[17]:

Հայտնի է, որ էթնիկ խտրականությունը նույն կերպ չի ազդում կանանց և տղամարդկանց վրա: Չնայած միջազգային մակարդակում առկա բարձր իրազեկվածությանը՝ փոքրամասնությունները ներկայացնող կանայք դեռևս քիչ նկատելի են պաշտոնական քաղաքականության մեջ, անգամ երբ այդ քաղաքականության նպատակը գենդերային խտրականության դեմ պայքարն է: Սա ազգային փոքրամասնությունների կանանց էլ ավելի խոցելի է դարձնում հետագա խտրականության նկատմամբ[18]:

Հաճախ ազգային փոքրամասնությունների կանայք նաև ներխմբային խտրականությունների զոհ են դառնում: Սա վերաբերում է փոքրամասնության շրջանակներում տեղի ունեցող խտրական պրակտիկային: Նման պրակտիկայի օրինակներ են վնասակար մշակութային և ավանդական սովորույթները, ինչպիսիք են օրինակ՝ վաղ և հարկադիր ամուսնությունները, կանանց նկատմամբ ճնշումները, պատվի համար սպանությունները և այլն:

Կանանց հնարավորությունների և կարողությունների զարգացմանն ու հիմնարար իրավունքների և ռեսուրսների ընդլայնմանն ուղղված ծրագրերը հաճախ ազդեցություն չեն ունենում

*17 Salto Youth. Intersectionality: an approach to Empower women at the Crossroads.*
*18 Նույն տեղում*

փոքրամասնությունների կանանց վրա: Արևմտյան կանանց հզորացումը տարբերվում է խոցելի փոքրամասնությունների կանանց հզորացումից: Ուստի նպատակները, խնդիրները, մեթոդները, նախագծերը և քաղաքականությունները պետք է համապատասխանեցվեն առանձնահատուկ թիրախային խմբի կարիքներին:

Մեկ այլ խոչընդոտ, որին ՔՀԿ-ները բախվում են փոքրամասնությունների կանանց հետ աշխատելիս, այն է, որ շատ հաճախ ՔՀԿ աշխատակիցները չեն պատկանում նույն փոքրամասնությանը: Այս հանգամանքը կարող է թյուրըմբռնումներ և լարվածություն ստեղծել ՔՀԿ-ի և թիրախային խմբի միջև հարաբերություններում: Այդ պատճառով, նախագծեր սկսելուց առաջ, կարևոր է խորհրդակցել ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների հետ՝ եզդի կանանց հետ աշխատելու ճիշտ մեթոդաբանություն որդեգրելու համար: Տվյալ դեպքում ազգային փոքրամասնությունների կազմակերպությունները կարող են լինել «մշակութային միջնորդներ»:

Եզդի կանանց հետ աշխատելու երկրորդ կարևոր նրբությունն այն է, որ խոցելի փոքրամասնությունների համայնքներում կանայք բազմաթիվ ռիսկերի են ենթարկվում, երբ օրինակ, որոշում են արձագանքել իրենց մշակույթին, ավանդույթների վերաբերյալ հայտարարություններին: Դա ըմբոստության կամ «հակադրվելու» պատճառով իրենց իսկ համայնքից դուրս մնալու ռիսկն է:

Ուստի կարևոր է զգուշորեն մոտենալ նման զգայուն թեմաներին: Վնասակար պրակտիկայի մասին, ինչպիսին է եզդի աղջիկների վաղ ամուսնությունը պետք է խոսել, զրույցի դիտամինկան փոփոխելով դրականի: Օրինակ՝ ինչ արդյունքների կհասնեն կանայք, եթե նրանք չամուսնանան վաղ տարիքում կամ օրինակ վերցնեն տարբեր ոլորտներում հաջողության հասած եզդի կանանցից: Այստեղ շատ կարևոր է նաև այնպես աշխատել, որ չսրվեն հարաբերությունները եզդի կնոջ և համայնքի միջև:

Շատ հաճախ դասընթացավարները և լրատվամիջոցները վատ և ոչ դրական  կողմով են ցույց տալիս համայնքը, օրինակ, որ համայնքը նահապետական է և հետադիմական: Եվ եզդիներն այդ պատճառով երբեմն փորձում են հեռու մնալ իրենց ինքնությունից, որպեսզի այլևս չկապվեն այս «վատ և վնասակար համայնքի» հետ: Եվ այստեղ է, որ նաև առաջ է գալիս ինքնության կորստի վտանգը:

Ներկայումս Հայաստանի կառավարության ամենամեծ մարտահրավերներից մեկը շարունակում է մնալ  եզդիների շրջանում տարածված վաղ ամուսնությունները: Եվրոպայի Խորհրդի Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեն իր զեկույցում նշել է, որ եզդի երեխաների, հատկապես աղջիկների շրջանում շատ են դպրոցական

կրթությունից դուրս մնալու դեպքերը:[19]
ՀՀ ԱԺ-ում ընտանեկան օրենսգրքում ամուսնության տարիքի փոփոխության հարցի քննարկման ժամանակ առաջարկվեց մի տարբերակ՝ 18 տարեկան աղջիկների և տղաների համար: Սակայն, եզդի համայնքի որոշ ղեկավարներ սկսեցին բողոքել և նույնիսկ ցույցեր կազմակերպել: Արդյունքում, 2013-ի ապրիլին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց Ընտանեկան օրենսգրքի փոփոխությունները: Ըստ նոր կանոնակարգի, անձը կարող է ամուսնանալ 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է (ընտանեկան օրենսգիրք, հոդված 10):

Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական Կոմիտեն համարեց, որ թեև մշակույթի և ավանդույթների դերը կարևոր է, բայց այնուամենայնիվ առաջնահերթությունը պետք է տրվի այն հնարավորություններին, որոնք ապահովում են ամբողջական և լրիվ կրթություն:[20]

---

*19 Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities. P.1. Fourth Opinion on Armenia. rm.coe.int/16806f7f70*
*20 Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities.Fourth Opinion on Armenia. rm.coe.int/16806f7f70.*

Կոմիտեն նշել է նաև, որ ՀՀ կառավարությունն ուշադրություն չի դարձնում եզդիական համայնքում գենդերային հավասարության խնդիրներին:

Այս կապակցությամբ նրանք առաջարկեցին օրենսդրություն ստեղծել վաղ ամուսնությունների խնդրի վերաբերյալ: Սակայն մինչ այժմ դա չի արվել:

Չնայած «Կրթության մասին» օրենքը սահմանում, որ 12-ամյա կրթությունը պարտադիր է, սակայն շատ դեպքեր կան, երբ եզդի երեխաները դուրս են մնում դպրոցներից՝ չավարտելով անգամ 9-րդ դասարանը: Հայաստանում տարածված է այն կարծիքը, որ չարժե միջամտել եզդիների կյանքին, և նրանց խնդիրները պետք է լուծվեն միայն համայնքի ներսում: Հաճախ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները, այս խնդրի հետ առնչվող պետական պաշտոնատար անձինք չգիտեն, թե ինչպես վարվել երեխաների ամուսնության դեպքերում և հաղորդում չեն տալիս ոստիկանություն երեխայի՝ դպրոցից դուրս մնալու կամ մանկահասակ տարիքում ամուսնության մասին:

# ՄԱՍ 2

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Նպատակ.** ձևավորել և փոխանցել հանրային քաղաքականության վրա ներազդեցություն ունենալու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:

Հանրային քաղաքականությունը հայեցարակարգերով և ծրագրերով առաջնորդվող ինստիտուցիոնալացված փոփոխության առաջարկ է: Սովորաբար այս առաջարկները ձևավորվում են կառավարության կամ քաղհասարակական կազմակերպությունների կողմից:

Մարդու գոյության ընթացքում ամեն ինչ՝ կենցաղը, սովորույթները, կանոնները, օրենքները միշտ փոխվել են ժամանակին համընթաց և արձագանքել են տարբեր ժամանակաշրջանների ստեղծած մարտահրավերներին: Հասարակության զարգացման մի շարք տենդենցենրի հատման արդյունքում, որոնք միտված էին տարբեր խնդիրների լուծմանը և մարդկային շահի բավարարմանը, ձևավորվել է քաղաքականությունը (politics): Պետությունների ձևավորմանը զուգընթաց ակնհայտ դարձավ, որ սոցիալական հարաբերությունները կարգավորող համակարգերը՝ կրոն, ավանդույթներ, սովորույթներ և այլն, արդեն անարդյունավետ են դարձել, քանի որ հասարակության մեջ բազմակարծությունը շատ ավելի մեծ էր: Առաջ եկավ քաղաքականությունը, որը տարբեր գաղափարների շուրջ ձևավորված խմբերի շահերը պիտի պաշտպաներ:

Վերոնշյալից ելնելով քաղաքականությունը կարելի է սահմանել որպես խմբերի նպատակային փոխգործակցության արդյունքում ձևավորված հարաբերությունների ամբողջություն, կապված իրենց հասարակական նշանակության շահերի իրականացման նպատակով պետական իշխանության ձեռքբերման, պահպանման և օգտագործման հետ[21]:

Ըստ էության՝ ժամանակակից քաղաքականության ընկալումը ենթադրում է, որ մեզնից յուրաքանչյուրն իր հստակ դերն ունի քաղաքականության մեջ և կարող է այն ձևավորել և իր ազդեցությունն ունենալ: Պետությունը որպես սուվերեն մարմին ստեղծել է այդ բոլոր մեխանիզմները, որ յուրաքանչյուր քաղաքացի կարողանա իր մասնակցությունն ունենալ:
Ընտրված իշխանության ձևավորումից հետո, ստացած քվեով իշխանությունը ստանում է մանդատ իր քաղաքականությունը (policy) վարելու բոլոր հիմնական ուղղություններով, դրանք են՝

- Տնտեսությունը/տնտեսական քաղաքականությունը
- Կրթություն/կրթական քաղաքականությունը
- Արտաքին քաղաքականությունը
- Սոցիալական քաղաքականությունը
- Իրավունքը
- Մշակույթը և այլն:

---

*21 Խաղաղաշինական կրթություն, Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում ՀԿ, www.frontlineyouth.net*

Եզդիական համայնքի հետ աշխատելիս առնչվող քաղաքականությունների ցանկից են՝ ներառական կրթության քաղաքականությունը, գենդերային քաղաքականությունը և այլն:

Դիտարկենք գենդերային քաղաքականությունը հասկանալու համար մի կողմից երկրի կառավարման համակարգի, իշխող ուժի, օրենքների կապը և փոխառնչությունը գործնականում երևույթների և փորձի հետ: Գենդերային քաղաքականությունը, համաձայն տեսության, երեք տեսակավորում ունի՝ գենդերային կույր, գենդերային չեզոք և գենդերային զգայուն կամ գենդերազգայուն քաղաքականություն: Համապատասխանաբար **գենդերային կույր քաղաքականությունը** անտեսում է որևէ երևույթի գենդերային ուղղորդումն ու դիտանկյունը, ու չի արձագանքում տարբեր սեռերի կարիքներին, օրինակ՝ դպրոցում ֆիզիկական ակտիվություն ապահովելու համար վերանորոգվում է ֆուտբոլի դաշտը, մինչդեռ աղջիկների ֆուտբոլային խումբ չկա և չի էլ նախատեսվում ունենալ, արդյունքում ունենք գործողություն, որն ամբողջությամբ անտեսում է աղջիկների կարիքներն ու ցանկությունները: **Գենդերային չեզոք քաղաքականությունը** ընդունում է սեռերի տարբեր կարիքներն ու առանձնահատկությունները, իսկ մշակված գործողությունները ոչ անտեսում, ոչ էլ աջակցում են որևէ խմբի, այլ իրենց բնույթով չեզոք են, օրինակ՝ սեռով չտարանջատված, ընդհանուր սանհանգույցներ: Քաղաքականությունը ոչ միայն գիտակցում է սեռերի առանձնահատկություններն ու կարիքները,

այլև համապատասխան տարբերակված միջոցառումներ նախաձեռնում՝ ապահովելու բոլոր սեռերի կարիքները, օրինակ՝ առանձնացվում է կերակրող մայրերի համար սենյակ, կամ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց սանհանգույցներում տեղադրվում են երեխայի հիգիենայի համար առանձնացված հարմարանքներ (հաճախ նման հարմարանքներ կգտնեք կանանց սանհանգույցներում, ինչը կույր թաղաքականության արդյունք է, քանի որ անտեսում է հայրերի կարիքները) և այլն:

Որպեսզի որևէ պետություն ունենա որևէ երևույթի նկատմամբ քաղաքականություն, անհրաժեշտ է ոչ միայն քաղաքական կամք, իրավական հենք, այլև տեղական մակարդակում գործնական կիրառում: Հիշենք ներառական կրթության քաղաքականությունը և գործնական կիրառումը:

Առաջարկում ենք ուսումնասիրել ներառական կրթության ոլորտի առավելություններն ու բացերը՝ կենտրոնանալով ազգային փոքրամասնությունների առանձնահատկության վրա (կրոն, մշակույթ, լեզու և այլն): Կարող եք կիրառել իրավիճակի վերլուծության գործիքներից PESTEL մեթոդը, որը հնարավորություն է տալիս միևնույն իրավիճակը վերլուծել տարբեր տեսանկյուններից:

Քաղաքական.

- հաշվի են առնվում կառավարության որոշումները, հարկային, աշխատանքային և այլ կարգավորումները

Տնտեսական.

- հաշվի են առնվում տնտեսական գործոնները, ինչպիսիք են տնտեսական աճը, փոխարժեքը, գնաճը, տոկոսադրույքները և այլն: Տնտեսական տվյալները կարող են կտրուկ ազդեցություն ունենալ ծրագրի իրականացման ողջ ընթացքի վրա

Սոցիալական.

- հաշվի են առնվում սոցիալական գործոնները, ինպիսիք ենք բնակչության մտածելակերպը, ավանդույթները, ապրելակերպը, սոցիալական կարիքները, համայնքում առկա տրամադրվածությունը, հետաքրքրությունները և այլն

Տեխնոլոգիական.

- հաշվի են առնում տեխնոլոգիական նորարարությունները, որոնք փոխկապակցված են շոշափելիք խնդրին: Տեխնոլոգիական որոշակի միտումները հաշվի չառնելը կարող է ռիսկային լինել ծրագրի հաջող իրականացման համար

բնապահպանական.

- հաշվի են առնում բնապահպանական և էկոլոգիական ներկա իրավիճակը, ռիսկները, պահանջները

իրավական.

- հաշվի են առնում օրենքները, օրենսդրական դաշտը, կարգավորումները և սահմանափակումները, որոնք կարող են խոչընդոտել ծրագրի իրականացումը

# Թեմա 2.1 Ռազմավարություն

**Նպատակ.** Ներկայացնել եզդիական համայնքում վաղ ամուսնությունների կանխարգելման վերաբերյալ մշակված այլընտրանքային ռազմավարության բովանդակությունը և դրական փորձը:

Քաղաքականություններն ու իրավակարգավորումները անհրաժեշտ, բայց հաճախ բավարար չեն, որևէ հիմնախնդրի վերացման կամ մեղմման համար: Այսպես Մարդու իրավուքների եզդիական կենտրոնը, արձագանքելով ՀՀ-ում եզդիական համայնքում տարածված վաղամուսնությունների բացասական պրակտիկային, մշակել է այլընտնրանքային ռազմավարություն՝ ՀՀ պետական գերատեսչությունների, Մարդու իրավունքների պաշտպանի, ՔՀԿ ներկայացուցիչների և փորձագետների հետ համագործակցության արդյունքում:

Առաջարկում ենք ծանոթանալ ռազմավարությանը, ընդգծել Ձեր տեսնակյունից կարևոր բաղադրիչները, նաև վերհանել բացերն ու առաջարկել նորույթ: Նոր նպատակ ու համապատասխան գործողություններ առաջարկելու համար խորհուրդ ենք տալիս կիրառել նպատակների SMART մոտեցումը:

Այս մեթոդը անունը հապավում է, որ բացվում է հետևյալ կերպ՝ հստակ, չափելի, հասանելի, տեղին, ժամանակին: Սա ենթադրում է, որ SMART նպատակ սահմանելիս այն անպայման պետք է համապատասխանի այս հինգ սկզբունքներին.

- Specific (Հատուկ, կոնկրետ). Խնդիրը պետք է հստակ և կոնկրետ ձևակերպված լինի: Վերացական, անորոշ դատողություններն ընդունելի չեն:
- Measurable (Չափելի). Չափելիությունն ապահովելու համար որակական և քանակական ցուցանիշներ են անհրաժեշտ:
- Achievable (Հասանելի). Խնդիրը պետք է իրատեսական լինի՝ մեր ունեցած ռեսուրսների սահմաններում:
- Relevant (Վերաբերելի). Ինչքանով է խնդիրն ակտուալ և արդյոք օգնում է հասնել գլխավոր նպատակին: Ինքնանպատակ չլինի:
- Time-bound (Ժամանակային սահմաններ ունեցող). Պետք է պատկերացում լինի՝ երբ է հնարավոր իրագործել այն:

Օրինակ՝ մենք դիտարկում ենք ընտանեկան բռնության հիմնահարցը, հասկանում ենք, որ այն արատավոր պրակտիկա է, և պետք է վերջն դնել դրան: Առաջարկում ենք հասկանալ, թե ստորև բերվող օրինակներից ո՞րն է համապատասխանում SMART մոդելին և ինչու՞:

1. Մեր նպատակն է վերացնել ընտանեկան բռնությունը
2. Մեր նպատակն է նվազեցնել ընտանեկան բռնության թիվը Հայաստանում
3. Մեր նպատակն է նվազեցնել ընտանեկան բռնության դեպքերի քանակը ՀՀ-ում՝ 50%-ով մեկ տարվա ընթացքում

Փորձեք կառուցել Ձեր SMART նպատակները և այս մեթոդով լրամշակեք ռազմավարությունը: Մտածեք և կիսվեք մտքերով այն մասին, թե որոնք են բացերը, որոնք պետք է լրամշակել, կամ ռիսկերը, որոնցից պետք է խուսափել:

Kingdom of the Netherlands

**«Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» ՀԿ**

**«Վաղ ամուսնությունների կանխարգելումը որոշում կայացնողների և եզդիական համայնքի համագործակցության միջոցով»**

# Այլընտրանքային ռազմավարություն 2022-26թթ.

**1. Կանխարգելում**

| № | Նպատակ | Առաջարկվող միջոցառում | ժամկետ | Առաջարկվող արդյունքային ցուցանիշ | Առաջարկվող պատասխանատու կատարող | Առաջարկվող համակատարող | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ապահովել օրենքի կիրառման արդյունավետ մեխանիզմներ և կանխարգելել վաղ ամուսնությունների դեպքերը | 1. վերանայել և բարելավել իրավական հենակետերը (ՀՀ Քաղաքացիական, Քրեական օրենսգրքեր)՝ կանխելու հնարավոր օրինազանցությունը<br><br>2. մշտադիտարկել և առաջարկել օրենքի կիրառման արդյունավետ մեխանիզմներ՝ ուսումնասիրելով վաղ ամուսնությունների պրակտիկան Հայաստանում<br><br>3. վերապատրաստել դատավորներին՝ վաղ ամուսնությունների, ազգային փոքրամասնությունների և գենդերային զգայուն դեպքեր վարելու ուղղությամբ | 2022-24 | Բարելավված իրավական կարգավորումներ<br><br>Լավարկված օրենքի կիրառման արդյունավետ մեխանիզմների առկայություն<br><br>Մասնագիտական վերապատրաստումների շարք | ՀՀ Արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>Միջազգային կազմակերպության հետ միասին (համաձայնությամբ) | Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Աջակցել իրավական կարգավորումներին և խթանել աջակցող քաղաքականություններին | 1. վարել վիճակագրություն՝ իրավախախտումների վերաբերյալ<br>2. քարտեզագրել վաղ ամուսնությունների դեպքերը<br>3.աջակցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատանքներին՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, այդ թվում վաղ ամուսնությունների պատճառով կրթությունից դուրս մնացած եզդի աղջիկների հիմնահարցերի լուծման ուղղությամբ<br>4.ստեղծել միջմասնագիտական խորհրդատվական մարմին՝ ներգրավելով շահակից բոլոր կողմերին վաղ ամուսնությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակման համար<br>5. կազմակերպել կարողությունների զարգացմանն և զգայունության բարձրացմանն ուղղված հանդիպումներ շահագրգիռ և պատասխանատու կառույցների համար | 2023-25 | Իրավախախտումների վերաբերյալ արդյունահավատ վիճակարգության առկայություն<br><br>Համայնքային թեմատիկ հանձնաժողովների աշխատանքի առկայություն<br><br>Միջմասնագիտական խորդատվական մարմնի հանդիպումներ<br><br>կարողությունների զարգացմանն և զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br>ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Քաղաքացիական անվտանգության մշակույթի ձևավորում, գլխավորապես եզդի աղջիկների առևանգումների բացառում | 1. իրավապահ մարմինների կողմից ՀՀ-ում գործող օրենսդրական դրույթների համաձայն՝ անչափահաս աղջիկների, մասնավորապես՝ եզդի համայնքի ներկայացուցիչ, առևանգման դեպքերին արագ արձագանքման և բացահայտման նպատակով իրականացնել համապատասխան աշխատանքներ<br><br>2. ճգնաժամային իրավիճակներում անձնական պաշտպանության հարցերով ուսուցման կազմակերպում աղջիկների համար, մասնավորապես՝ եզդի աղջիկների համար<br><br>3. եզդիական համայնքում և դպրոցներում իրազեկման աշխատանքներ ահազանգի և թեժ գծերի վերաբերյալ | 2022-23 | Միջամտության միջոցառումների կազմակերպում<br><br>Աղջիկների համար ինքնապաշտ-պանական ուսուցման կազմակերպում<br><br>Թեժ գծի կիրառում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն | ՀՀ ոստիկա-նություն<br><br>ՀՀ քննչական կոմիտե<br><br>ՀՀ դատախա-զություն<br><br>Մարդու իրավունք-ների պաշտպան (համաձայ-նությամբ)<br><br>Հասարակա-կան կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) | օրենքով չարգել-ված այլ աղբյուր-ներ |
| 4 | Վաղ ամուսնությունների կանխարգելման թեմայով հանրային իրազեկվածության բարձրացում | 1. կանանց և աղջիկների իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերի և տեղական օրենքների ու իրավական նորմերի լայն իրազեկում<br><br>2.հանրակրթության ոլորտում համապատասխան առարկաների շրջանակներում գործնական աշխատանքների կիրառում, ստեղծված ուսումնական նյութերի ինտեգրում համապատասխան առարկաներում<br><br>3. հասարակական և | 2023-26 | Իրազեկման միջոցառումների շարք<br><br>Ուսումնական նյութերի առկայություն<br><br>Ուսումնական նյութերի ինտեգրում կրթության մեջ<br><br>Ուսումնաօժանդակ նյութերի ստեղծում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն | Հասարակա-կան կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) | օրենքով չարգել-ված այլ աղբյուր-ներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | երիտասարդական աշխատանքի ոլորտում կրթական կարողությունների զարգացում, ուսումնաօժանդակ նյութերի ստեղծում | | | | | |
| **2. Պաշտպանություն** | | | | | | | |
| 5 | Երաշխավորել եզդի աղջիկների կրթության հասանելիության իրավունքը | 1. Դպրոցի աշխատակիցների հետ տեղեկատվական հանդիպումներ՝ վաղ ամուսնությունների կախնարգելման, բացահայտման, արձագանքման մեխանիզմների շուրջ<br><br>2. Կրթությունից դուրս մնացած երեխաների, մասնավորապես՝ եզդի աղջիկների հաշվառում, նրանց կրթական իրավունքի վերականգնում և պաշտպանում<br><br>3. Կրթել ծնողներին և համայնքի անդամներին երեխաների կրթության իրավունքի, ինչպես նաև վաղ ամուսնությունների արատավոր պրակտիկայի հետևանքների վերաբերյալ<br><br>4. Վերապատրաստել դպրոցի և համայնքի սոցիալական աշխատողներին, երիտասարդական աշխատողներին, | 2022-26 | Տեղեկատվական հանդիպումներ դպրոցի աշխատակից-ների հետ<br><br>Դեպքերի հաշվառում<br><br>Տեղեկատվական հանդիպումներ ծնողների և համայնքի հետ<br><br>Մասնագետների վերապատրաս-տում | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարութ-յուն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարութ-յուն | ՀՀ ոստիկա-նություն<br><br>Մարդու իրավունք-ների պաշտպան (համաձայ-նությամբ)<br><br>ՄԱԿ-ի բնակչութ-յան հիմնադրամ (համաձայ-նությամբ)<br><br>Հասարակա-կան կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) | օրենքով չարգել-ված այլ աղբյուր-ներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հոգեբաններին և այլ հարակից մասնագետներին վաղ ամուսնությունների կանխարգելման, միջամտության և ուղղորդման աշխատանքների վերաբերյալ | | | | | |
| 6 | Երաշխավորել եզդի աղջիկների և կանանց առողջապահության հասանելիության իրավունքը | 1. Հիվանդանոցների աշխատակիցների հետ տեղեկատվական հանդիպումներ՝ վաղ ամուսնությունների կանխարգելման, բացահայտման, արձագանքման մեխանիզմների շուրջ<br><br>2. Վաղ ծննդաբերությունների, մասնավորապես՝ եզդիական համայնքում աղջիկների հաշվառում, նրանց առողջապահական իրավունքի հասանելիության ապահովում<br><br>3. Կրթել ծնողներին և համայնքի անդամներին երեխաների սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի, ինչպես նաև վաղ ամուսնությունների արատավոր պրակտիկայի առողջապահական հետևանքների վերաբերյալ<br><br>4. Վերապատրաստել մանկաբույժներին, | 2022-26 | Տեղեկատվական հանդիպումներ հիվանդանոցի աշխատակիցների հետ<br><br>Դեպքերի հաշվառում<br><br>Տեղեկատվական հանդիպումներ ծնողների և համայնքի հետ<br><br>Մասնագետների վերապատրաստում | ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ ոստիկանություն | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)<br><br>ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ)<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընտանեկան բժիշկներին, գինեկոլոգներին և այլ հարակից մասնագետներին վաղ ամուսնությունների արձանագրման և ուղղորդման աշխատանքների վերաբերյալ | | | | | |
| 7 | Ընտանեկան բռնությունից կանանց և աղջիկների պաշտպանվածության ապահովում, մասնավորապես՝ եզդի աղջիկների համար | 1. միջգերատեսչական համագործակցություն կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելման և բռնության ենթարկված կանանց և աղջիկների պաշտպանություն տրամադրելու հարցերով | 2022-26 | Ընտանեկան բռնությունից պաշտպանված լինելու մեխանիզմների առկայություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| **3. Օժանդակություն և վերականգնում** | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Տնտեսական, սոցիալական, կրթական, առողջապահական, մշակութային և այլ ոլորտներում եզդի կանանց հզորացմանն ու ներգրավվածության ապահովմանն ուղղված ծրագրերի խթանում, եզդիական համայնքների ակտիվ մասնակցության ապահովում | 1. երիտասարդական կենտրոնների ստեղծում եզդիական համայնքներում<br><br>2. երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանն աջակցող ծրագրերի իրականացում<br><br>3. քաղաքացիական կրթությանն ու ակտիվությանն աջակցող համայնքային ծրագրերի իրականացում<br><br>4. բիզնեսի և սոցիալական ձեռներեցության խթանում եզդիական համայնքներում և եզդի կանանց համար | 2022-26 | Եզդիական համայնքներում երիտասարդական կենտրոնների առկայություն<br><br>Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ<br><br>Համայնքային ծրագրեր և միջոցառումներ<br><br>Բիզնես ծրագրեր և միջոցառումներ | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)<br><br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 9 | Եզդի կանանց և աղջիկներին տեղեկատվության և աջակցության ցանցերի տրամադրում | 1. կանանց իրավունքների պաշտպանության, հավասար հնարավորությունների ապահովմանը վերաբերող թեմաներով դասընթացներ<br><br>2. վաղ ամուսնության դեպքերի արձագանքման մեխանիզմների մշակում և հանրայնացում<br><br>3.աջակցության ցանցերի բազմամասնագիտական թիմերի ստեղծում և/կամ վերապրոֆիլավորում | 2022-24 | Կանանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում<br><br>Արձագանքման մեխանիզմների առկայություն<br><br>Արձագանքման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում<br><br>Աջակցության ցանցի գոյություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ) | Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Քարտեզագրման արդյունքների հիման վրա վաղ ամուսնության ենթարկված կամ վտանգի տակ գտնվող եզդի կանանց և աղջիկների սոցիալ-հոգեբանական և իրավաբանական աջակցության ցուցաբերում | 1. պետական գերատեսչությունների և քաղ-հասարակական կառույցների հետ համագործակցում՝ վաղ ամուսնությունների դեպքերի քարտեզագրման, կանանց և ընտանիքների կարիքների գնահատման նպատակով<br><br>2. Եզդի կանանց և աղջիկներին զբաղվածության, բուժօգնության, սոցիալական օժանդակության, կրթության, իրավաբանական աջակցության, այլ սոցիալ-տնտեսական և մշակութային կարիքների գնահատում և դրան համապատասխան ինտեգրման պլանի կազմում | 2024-26 | Դեպքերի քարտեզագրում և գնահատում<br><br>Եզդի կանանց և աղջիկներին զբաղվածության, բուժօգնության, սոցիալական օժանդակության, կրթության, իրավաբանական աջակցության, այլ սոցիալ-տնտեսա-կան և մշակութային կարիքների գնահատում<br><br>Համագործակ-ցության հարթակների առկայություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութ-յուն | միջազգային կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ)<br><br>Հասարակա-կան կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) | օրենքով չարգել-ված այլ աղբյուր-ներ |
| 11 | Եզդի կանանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման մշակույթի ձևավորում և դրա պաշտպանության մշտադիտարկման մեխանիզմների ներդրում | 1. կանանց դերի վերաբերյալ եզդիական համայնքում տարբեր շրջանակների հետ հանդիպումների, համաժողովների կազմակերպում, այդ թվում՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ<br><br>2. միջհամայնքային համագործակցություն և կառուցողական քննարկումներ | 2023-25 | կանանց դերի վերաբերյալ եզդիական համայնքում տարբեր շրջանակների հետ հանդիպումների, համաժողովների անցկացում<br><br>Համատեղ օրակարգի ձևավորում | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարութ-յուն | միջազգային կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ)<br><br>Հասարակա-կան կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) | օրենքով չարգել-ված այլ աղբյուր-ներ |
| **4. Համագործակցություն** | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | Ուսումնասիրությունների իրականացում | 1. վաղ ամուսնությունների հիմնախնդրի համակողմանի վերլուծություն<br><br>2. վիճակագրության և փաստերի վրա հիմնված հետազոտություններ<br><br>3. ազգային փոքրամասնությունների և վաղ ամուսնության դեպքերի խաչմերուկային քարտեզագրում և վերլուծություն | 2022-24 | Վերլուծության առկայություն<br><br>Հետազոտություն-ների առկայություն<br><br>Դեպքերի քարտեզագրում և վերլուծություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | միջազգային կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ)<br><br>Հասարակա-կան կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) | օրենքով չարգել-ված այլ աղբյուր-ներ |
| 13 | Գենդերային ուղղորդում և Մեդիա | 1. առաջարկել ՔՀԿ-ներին և բարձրագույն ուսումնական հաստատություններին հետազոտական և ուսումնական ծրագրերում ներառել վաղ ամուսնությունների և եզդի կանանց իրավունքների կամ դրա հետ կապված թեմաներով ուսումնասիրություն<br><br>2. կազմակերպել լրագրողների վերապատրաստում և կազմել ուսումնական նյութերի պատրաստում | 2022-26 | Հետազոտական և ուսումնական ծրագրերում վաղ ամուսնությունների և եզդի կանանց իրավունքների կամ դրա հետ կապված թեմաներով ուսումնասիրության իրականացում<br><br>Լրագրողների վերապատրաստման շարք<br><br>Օժանդակ ուսումնական նյութերի առկայություն | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | միջազգային կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ)<br><br>Հասարակա-կան կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) | օրենքով չարգել-ված այլ աղբյուր-ներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Մշտադիտարկում | 1. վաղ ամուսնության դեպքերի թվի և աշխարհագրության շարունակական գնահատում և մշտադիտարկում<br><br>2. իրավական նորմերի և մեխանիզմների արդյունավետության շարունակական գնահատում և մշտադիտարկում<br><br>3. կրթությունից դուրս մնացած երեխաների և վաղ ամուսնության դեպքերի խաչմերուկայնության/հատման շարունակական գնահատում և մշտադիտարկում<br><br>4. կանանց սեռական և վերարտադրողական առողջության և վաղ ամուսնության դեպքերի խաչմերուկայնության/հատման շարունակական գնահատում և մշտադիտարկում | 2022-26 | Մշադիտարկման և գնահատման առկայություն հետևյալ ուղղություններով՝<br><br>վաղ ամուսնության դեպքերի թիվը և աշխարհագրությունը<br><br>իրավական նորմերի և մեխանիզմների արդյունավետությունը<br><br>կանանց սեռական և վերարտադրողական առողջության և վաղ ամուսնության դեպքերի խաչմերուկայնություն/հատման կետեր | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ) | Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

# Թեմա 2.3 Մշտադիտարկում

**Նպատակ՝** տրամադրել մասնակիցներին ընհանուր գիտելիքներ մոնիթորինգի շուրջ, ներկայացնել մարդու իրավունքների մշտադիտարկման առանձնահատկությունները, զինել մշտադիտարկման գործնական գիտելիքներով:

Մշտադիտարկումը (այլ կերպ՝ մոնիթորինգ, լատ.՝ *նախազգուշացնող)* տեղեկատվության համակարգված և կանոնավոր հավաքագրման և վերլուծության գործընթաց է հստակ նպատակների համար, ինչպիսիք են՝

- Փորձի ուսումնասիրություն՝ հետագա պրակտիկաներն ու գործունեությունը բարելավելու համար
- Ներքին և արտաքին հաշվետվողականություն՝ օգտագործված ռեսուրսների և ձեռք բերված արդյունքների նկատմամբ
- Փաստահեն և տեղեկացված որոշումներ կայացում՝ ապագայի ծրագրերի ու գործընթացների ճշգրիտ պլանավորմանն ուղղված
- Շահառուների կամ թիրախ խմբերի զորակցում և հզորացում

Քաղհասարակական ոլորտում ամենից հաճախ հանդիպում են ծրագրային մշտադիտարկման և մարդու իրավունքների մշտադիտարկման օրինակներ ու դեպքեր:

Ծրագրային մշտադիտարկումը ընթացիկ գործընթաց է՝ ծրագրի մեկնարկից մինչև ավարտ տեղեկատվության

պարբերաբար հավաքումն ու վերլուծությունն է: Այն հնարավորություն է տալիս ծրագրի ընթացքում բացահայտել և հասցեագրել խնդիրները՝ ապահովելով ծրագրային վերջնարդյունքների իրականացումը: Ծրագրի մշտադիտարկում իրականացնողը հենց ծրագրային թիմն է կամ վերջինիս գործընկերները:

Մարդու իրավունքների մոնիթորինգը փաստերի հավաքագրման, ստուգման և օգտագործման երկարաժամկետ գործընթաց է, որի նպատակն է մարդու իրավունքների ոլորտում բարեփոխումներն ու իրավիճակի բարելավումը:

Մարդու իրավունքների մշատադիրակում իրականացնելիս կարևոր է իրապես հասկանալ երկրի սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական գործընթացներն ու բոլոր ներազդող գործոնները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ պլանավորել և իրագործել գործընթացը:

Մոնիթորինգի կարևորագույն բաղադրիչը տեղեկատվության հավաքագրումն է, որի գործիքների արդյունավետ ընտրությունը պայմանավորում է ճշգրիտ, հավաստի և որակյալ վերլուծություն և արդյունք: **Կարևոր է առանձնացնել, թե որն է մշտադիտարկման հիմքում ընկած մարդու իրավունքների չափորոշիչը (իրավական հիմք, քաղաքականություն և այլն):**

Հավաքագրված տեղեկությունն ու վերլուծությունը անհրաժեշտ է ամփոփել հաշվետվության մեջ, որն էլ, ըստ նախապես ընտրված թիրախային խմբի, անհրաժեշտ է հասցեագրել որոշակի լսարանի:

Չափորոշիչների հետ աշխատելու համար խորհուրդ է տրվում օգտագործել ձեռնարկի առաջին մասում ներկայացված մարդու իրավունքների շրջանակն ու հավելվածի տեսքով տրամադրվող օժանդակ նյութը, և լսարանին խնդրել՝ ըստ իրենց մասնագիտական պատկանելիության առանձին խմբերում վերհանեն այն իրավական հենանիշերը (միջազգային պայմանագրեր, օրենքներ, իրավական ակտեր, որոշումներ, ռազմավարություններ ), որոնց վրա պետք է հիմնվեն տվյալ թեմայում մշտադիտարկում կատարելիս:



Ինչպես նշվեց, մարդու իրավունքների մշտադիտարկումն ենթադրում է քայլերի հաջորդականություն, որոնք են՝

- Իրավիճակի նախնական գնահատում (իրավախախտումներ, պրակտիկա և այլն)
- Տեղեկատվության հավաքագրում և վավերացում
- Վերլուծություն
- Հաշվետվություն
- Հետադարձ կապ և ջատագովություն (շահերի պաշտպանություն)

Կարևոր է հիշել, որ մշտադիտարկումը տեղի չի ունենում վակուումում, այսինքն մի միջավայրում, որը առանձնացնված է մնացյալից ու փոփոխություն չի կրում վրան, ընդհակառակը՝ մշտադիտարկումը, լինելով երկարաժամկետ գործընթաց, ենթադրում է իրավիչակային փոփոխություններ, որոնք ևս պետք է ընթացիկ գնահատել և հաշվի առնել: Այս տեսանկյունից կարևոր է ի սկզբանե սահմանել մոնիթորինգի սկզբունքներ, որը կարող է ներառել էթիկական նորմեր, ինչպես նաև ներքին և արտաքին ռիսկերի վերլուծություն և կառավարում (անվտանգություն և ապահովություն, գենդերային հիմնահարցեր և այլն):

Մշտադիտարկման հավաստիության ու ճշտությունը երաշխավորվում է նաև մասնագիտական էթիկական նորմերի միջոցով, որոնց մասին խոսելը ևս չափազանց կարևոր է:

Այն ոչ միայն ենթադրում է օբյեկտիվ և չեզոք վերլուծություն, այլև հստակ կանոններով առաջնորդվելը, ինչպես օրինակ՝

- Օբյեկտիվություն. իրավիճակի համակողմանի վերլուծություն, ներառյալ՝ առաջնային և երկրորդային աղբյուրների համադրում
- Չեզոքություն. աղբյուրների ընտրության զգուշավորություն և հավաստիություն (ինֆորմացիայի տիրապետման աստիճանը, խնդրի մասին խոսելու շարժառիթը և այլն)
- Անվտանգություն. անձնական տվյալների ապահովություն, աղբյուրների անանունություն, հետագա հետապնդման դեմ պաշտպանության մեխանիզմների ներդրում
- Զգայունություն. թիրախ լսարանի յուրահատկությունների գիտակցում, զգայուն թեմաների վերաբերյալ նախազգուշացման ահազանգի կիրառում (օրինակ, երբ խոսում եք կնոջ հետ պետք է զգուշացնել, որ խոսելիս շոշափվելու են ընտանեկան բռնության, բռնաբարության թեմաներ և այլ զգայուն թեմաներ):

## Առաջադրանք

Լսարանին փոքր խմբերում տրամադրել իրավիճակներ իրական կյանքից: Փոքր խմբերում նրանք պետք է սահմանեն այն էթիկական նորմերը, որոնցով պետք է աշխատեն տվյալ լսարանի հետ: Արդյունքները ամփոփել, ու ըստ անհարժեշտության, արխիվացնել որպես ձեռնարկի հավելված:

Մշտադիտարկումը սահմանում է ինչպես նպատակ, այնպես էլ խնդիրներ (ենթանպատակներ), մարդու իրավունքների մշտադիտարկման հիմնական խնդիրներից են՝

- Հայտնաբերել մարդու իրավունքների խախտումներն ու դրանց պատճառները (այդ թվում՝ համակարգային)
- Արձանագրել իրավախախտումների դեպքերը կամ պրակտիկան
- Պաշտպանել, վերականգնել խախտված իրավունքները կամ տրամադրել առաջարկություններ համապատասխան մարմիններին
- Խթանել պետության հաշվետվողականությունն ու պարտավորությունների իրագործումը
- Կանխել հետագա բռնությունները կամ իրավախախտումները (օրենսդրության փոփոխություն, ինստիտուցիոնալ բարեփոխումներ և այլն):

Մշտադիտարկման աշխատանքի առյուծի բաժինը, ըստ էության հետազոտական աշխատանքն է: Ուստի դասագրքային հետազոտական մեթոդներից առանձնացնենք հիմնական այն գործիքները, որոնք մշտադիտարկողը ամենից հաճախ է կիրառում՝

1. Փաստաթղթերի վերլուծություն,
2. Դիտարկում,
3. Գիտափորձ,
4. Հարցում:

1. Փաստաթղթերի վերլուծության միջոցով դուրս են բերվում մարդու իրավունքների չափորոշիչները և պետության պարտավորությունները (երբեմն այս աշխատանքը արդեն արված է, ուստի կարևոր է նաև ծանոթանալ նախորդ փորձերին և առկա հետազոտություններին): Այս փուլում տրվում է իրավիճակի ու հիմնախնդիրների նկարագրությունը: Վեր են հանվում հետագա՝ խորքային վերլուծության կամ հետազոտության ենթակա խնդիրները: Վերջապես իրականացվում է բուն փաստաթղթային ուսումնասիրությունը (անգլ.՝ desk research, թարգմ.՝ գրասենյակային հետազոտություն), որը ենթադրում է գրասենյակային աշխատանք, երբ համադրվում են արդեն իսկ առկա աղբյուրներն ու կատարվում եզրահանգումներ:

2. Դիտարկումը տեղեկատվության հավաքագրումն է անմիջական ընկալման միջոցով, երբ ֆիզիկապես ներկա

գտնվելով որևէ գործընթացին, արձանագրում ես իրական պրակտիկան, ապա համադրելով չափանիշներով սահմանվող ընթացակարգի հետ, փաստագրում ես արդյունքները:
Պետք է ի նկատի ունենալ, որ երբեմն դիտարկում իրականացնողը կամա-ակամա ազդում է դիտարկվողի վարքի վրա, որոնք ունեն իրենց ռիսկերը (հիշել՝ ընդտրությունների ժամանակ դիտորդների ներկայությունը, կամ դպրոցներում ստուգող-դիտորդների ժամանումը): Դիտարկումը հնարավոր է կազմակերպել բացահայտ տարբերակով՝ նախապես զգուշացմամբ կամ առանց զգուշացման և գաղտնի տարբերակով: Արդեն կապված իրավիճակից մշտադիտարկողը ազատ է ընտրել ամենից հարմար դիտարկման ձևաչափը:
Հղում կատարելով մոնիթորինգի ճշտության ու էթիկական նորմերին՝ պետք է նշել, որ մենք անխուսափելիորեն հանդիսանում ենք այն հանրության մասը, որը ցանկանում ենք ուսումնասիրել, ուստի անհրաժեշտ է այս մեթոդը փորձարկելիս մեկ անգամ ևս վերանայել էթիկական նորմերը, խուսափել հնարավոր շահերի բախումից:

3. Գիտափորձը առանձնահատուկ ձևաչափ է և ենթակա է կիրառման այն բոլոր տարբերակներում, երբ առկա է կանխավարկած, հիխոթեզ որևէ արտաքին գործոնով պայմանավորված վարքի, գործընթացի փոփոխության: Այս կերպ գիտափորձը ազդեցությունն է օբյեկտի վրա՝ նրա գործունեության փոփոխությունները և դրանց պատճառահետևանքային կապերը բացահայտելու նպատակով:

Օրինակ՝ լուսավորության ազդեցությունը աշխատանքի արտադրողականության վրա, կամ ղեկավար անձնակազմի ներկայությունը աշխատանքային ընթացակարգերի պահպանման վրա: Գիտափորձը որպես գործիք օգտագործելիս կարևոր է ի սկզբանե սահմանել արդյոք գործիքը կիրառվելու է զուգահեռաբար կամ հաջորդական, և ով է ստանձնելու ստուգիչ խմբի դերը:

4. Հարցումը որպես գործիք կարող է ծառայել և՛ քանակական, և՛ որակական հետազոտություններում: Այն որպես մշտադիտարկման ձևաչափ լայն տարածում ունի և լավ փորձարկված է, ըստ այդմ հնարավոր է կատարել հեռավար (էլ. փոստային, թվային գործիքների և այլն) և դեմ առ դեմ տարբերակով: Այն կարող է լինել գրավոր (անկետավորում) և բանավոր (հարցազրույց):
Որակական հարցման արդյունքներն ակնկալելիս կարևոր է հիշել, որ այն ներկայացուցչական չէ, և նպատակ է հետապնդում խորապես դիտարկել և վերլուծել որևէ խնդրի էությունը, մասշտաբը և ազդեցությունը, մինչդեռ քանակական արդյունքները հաճախ ցույց են տալիս խնդրի հաճախականությունը, տարածվածությունը, միտումները՝ արտահայտված և հիմնավորված թվերով:

Հարցման մեթոդը կիրառելիս վստահ եղեք, որ տիրապետում եք, ծանոթ եք սոցիոլոգիական մեթոդներին և նրբություններին, եթե հնարավորություն ունեք մի հապաղեք ներգրավելու թիմում մասնագետի, կամ խորհրդակցեք մասնագետի հետ: Կարևոր է ծանոթ լինել հարցաթերթերի մշակման մշակույթին, հարցերի տեսակներին, ընտրանքին ու փոփոխականներին և հարցվողների ընտրության գործիքներին:

# Թեմա 2.3 Շահապաշտպանություն

**Նպատակ.** տրամադրել շահապաշտպանության մասին տեսական և գործնական գիտելիքներ՝ ներառյալ անհրաժեշտ գործիքներ:

Շահապաշտպանությունը կամ ջատագովությունը (անգլ.՝ advocacy) որևէ փոփոխության ուղղված միջոցառում կամ գործընթաց է: Ցանկալի քաղաքականության, գործելակերպի, սոցիալական, վարքագծային, կամ քաղաքական փոփոխությունների հասնելու համար որոշակի անձանց կամ հաստատությունների վրա ազդեցություն գործելու կազմակերպված գործընթաց է, որը նպաստում է որոշակի խմբերի խնդիրների կամ հանրային հիմնախնդիրների լուծմանը:

Շահերի պաշտպանությունը ենթադրում է փոփոխություններ՝

- Օրենքում
- Քաղաքականություններում
- Քաղաքականությունների և օրենքների իրականացման մեջ
- Իշխանություն ունեցողների վարքագծի կամ վերաբերմունքի մեջ
- Կառավարական կառույցներում և դրանց որոշումներում

Շահերի պաշտպանությունն ունի քայլերի սահմանված հաջորդականություն՝

1. Վերլուծել իրավիճակը, ուսումնասիրել թիրախ խումբը
2. Սահմանել խնդիրը և նպատակը
3. Մշակել միջամտության ռազմավարություն
4. Մշակել գործողությունների ծրագիր և և հաղորդակցման մատրիցա
5. Գործընկերություններ և մասնակցայնություն
6. Գնահատում

Հատուկ խմբերի հետ աշխատելիս կարևոր է լինել իրազեկված, որդեգրել իրավունքահեն ու փաստահեն մոտեցում, հետևել մասնագիտական էթիկայի և նորմերի պահանջներին, կարողանալ կիրառել իրավիճակի վերլուծության, կարիքների և խնդրի բացահայտման, կոնֆլիկտների լուծման մի շարք մեթոդներ և գործիքներ: Այս գիտելիքներն ու կարողունակություններն (փորձ և հմտություն) ենթադրում են բազմամասնագիտական և միջառարկայական համագործակցություն:

Ստորև կներկայացնենք մի շարք գործիքներ, որոնք անհրաժեշտ են շահերի պաշտպանության կամ ջատագովության, ինչպես նաև խոցելի խմբերի հետ համայնքային աշխատանք իրականացնելիս.

# (Հիմնա)խնդրի վերլուծություն

Ցանկացած հիմնախնդիր, որին բախվում ենք մեր առօրյայում սովորաբար ունի պատճառահետևանքային ուղիղ անդրադարձում: Հիմնախնդիրը հասկանալու և դրա լուծման ուղիները գտնելու համար անհրաժեշտ է վերլուծել, թե որն է հիմնական կամ բուն խնդիրը, դրա պատճառ(ներ)ը և հետևանք(ներ)ը:



Հիմնախնդրի վերլուծման համար սովորաբար օգտագործվում են հետևյալ հարցադրումները՝

- Ակտուալությունը (առաջնահերթ, երկրորդական)
- Ներառումը (շահառու, շահակիր, շահագրգիռ խմբերի թիվը)
- Խորությունը (բարդ, պարզ)
- Մասշտաբը (ՀՀ, մարզային, կոնկրետ քաղաք կամ գյուղ)
- Տևողությունը (ընթացիկ, երկարաժամկետ)
- Ծագման ժամանակահատվածը (նոր, հին)
- Դրսևորման պարբերականությունը (պատահական-քաոտիկ, ոչ պատահական–պարբերական, միգուցե սեզոնային)

Խնդիրների ծառ գործիքը «շրջելով»՝ այն դառնում է լուծումների ծառ: Բացատրենք ասվածը օրինակի վրա՝ նկատում ենք, որ աղբի քանակը քաղաքում աճել է (հետևանք), խնդիրը որի հետ գործ ունենք՝ աղբահանման բացն է, որի պատճառները բազմազան են, այդ թվում՝ աղբ նետելու արգելքի վերաբերյալ օրենքի բաց, աղբահանման և բնապահպանության վերաբերյալ սակավ գիտելիքներ, աղբահանման կամ աղբի վերամշակման մշակույթի բացակայություն և այլն:

Նախ կարևոր է հասկանալ, որ խնդիրը լուծելու համար կարևոր է արձագանքել ոչ թե խնդրի հետևանքներին, այլ խնդրի պատճառներին, այսկերպ, եթե եկենք նույն օրինակով սահմանենք նպատակների՝ լուծումների ծառը:
Նախապես վերլուծելով իրավիճակը և մեր հնարավորությունները, որոշում ենք անդրադառնալ գիտելիքի բացին, ուստի սահմանում ենք նպատակ՝ բարձրացնել բնապահպանության վերաբերյալ հասարակաության զգայունությունը և տրամադրել աղբի կառավարման մասին գիտելիքներ: Մի մոռացեք հաջորդ փուլում այս նպատակը դարձնել ավելի SMART:

Իրավիճակի վերլուծության համար կարող եք օգտագործել նաև վերևում նշված PESTEL գործիքը:

## Թիրախ խումբ և կարիքի գնահատում

Հիմնախնդրի սահմանմանը զուգահեռ արդեն հնարավոր է տարանջատել՝ շահառու (ուղղակի ազդեցություն կրող խումբ), շահակիր (անուղղակի ազդեցություն կրող խումբ), շահագրգիռ կամ գործընկեր խմբերին: Տարբեր աղբյուրներ այս խմբերին տարբեր անուններ են տալիս, սակայն անուններից ավելի կարևոր է հասկանալ, թե ինչ կարիք ունի յուրաքանչյուր խումբը:

Կարիքների բացահայտումը սոցիոլոգիական հետազոտություններում առանձին ուղղություն է, որը, կախված հետազո-

տության նպատակից, օգնում է բացահայտել որևէ խմբի այս կամ այն կարիքը՝ օգտագործելով մի շարք գործիքներ և հնարքներ: Հետազոտության արդյունքում ստացված ինֆորմացիան վերլուծելու համար ստորև կառաջարկենք շահապաշտպանության մեջ կարևոր մի գործիք՝ ապրումակցման քարտեզագրումը (empathy canvas):




Քանի որ շահապաշտպանությունը միշտ չէ որ ներկայացուցչական է կամ մասնակցային, այսինքն հնարավոր են դեպքեր, երբ մեկ խմբի շահերի և իրավունքների համար ջատագովում է մեկ այլ խումբ կամ կազմակերպություն, ուստի կարևոր է իրապես հասկանալ թիրախ խմբի կարիքները:

Այս կանվասը/կմախքը  հնարավորություն է տալիս անձնավորելով պատկերավոր կերպով քարտեզագրել մեր ինֆորմացիան որևէ խմբի վերաբերյալ .1 ով է նա (ինչ իրա-

վիճակում է, ինչ դեր ունի տվյալ իրավիճակում), 2. ինչ փոփոխության կարիք կա (ինչ պետք է անի, ինչ որոշումներ պետք է կայացնի), 3. ինչ է տեսնում 4. ինչ է ասում 5. ինչ է անում 6. ինչ է լսում, 7. ինչ է մտածում և զգում:

Ըստ քարտեզի առաջին երկու կետերը օգնում են սահմանել այն փոփոխությունը, նպատակը, որին ուզում ենք հասնել, իսկ երրորդից յոթերորդ կետերը օգնում են հասկանալ ազդեցության կամ միջամտության հնարավորությունները:

Այս գործիքի միջոցով հնարավոր է կազմել նաև անձնավորել խմբին՝ ստեղծելով պերսոնա (persona-անձ): Հասկանալով և համեմատելով պերսոնան հնարավոր է հետագայում գնահատել իմացական, վերաբերմունքային և վարքագծային փոփոխությունը:

## Ռեսուրսների, գործընկերների քարտեզագրում

Ռեսուրս ասելով կարևոր է պատկերացնել ոչ միայն նյութական, այլև մարդկային և ինտելեկտուալ հնարավորությունները, որոնք դուք կամ ձեր գործընկերները ունեն: Քարտեզագրումն սկսելուց առաջ հարց տվեք Ձեզ, թե ինչ ռեսուրսներ ունեք. մարդիկ՝ մասնագետներ, կամավորներ, փող, տարածք, գույք, ծանոթություններ, համայնքապետի աջակցություն, ՀԿ-ի աջակցություն, լրատվամիջոցներ, այլ:

Առանցքում դնելով մարդուն, հարաբերությունները և կապերը, ստորև տրամադրում ենք գործընկերների քարտեզագրման մի գործիք, որի միջոցով հնարավոր կլինի պատկերացնել նաև, թե ինչ քաղաքականություն պետք է որդեգրել յուրաքանչյուր խմբի հետ հարաբերվելիս:




Գործիքն իրենից ենթադրում է կոորդինատային առանցք, որի մի առանցքը չափում է ազդեցությունը, մյուս առանցքը՝ հետաքրքրությունը խնդրի վերաբերյալ: Շահագրգիռ կողմերի դասակարգման չափանիշներն են՝ A1-ցածր ազդեցություն A2-միջին ազդեցություն A3-մեծ ազդեցություն A4–շատ մեծ ազդեցություն B1–ցածր հետաքրքրվածություն B2-միջին հետաքրքրվածություն B3–բարձր հետաքրքրվածություն B4–շատ բարձր հետաքրքրվածություն:

Այս տրամաբանությամբ տարաբաշխելով մեր բոլոր ներգրավված կողմերին՝ հնարավոր է տարանջատել նրանց հետ գործ ունենալու չորս հիմնական ուղղություն՝

1. Պահել տեսադաշտում, դիտարկել (A1, A2, B1, B2)
2. Բավարարված պահել (A3, A4, B1, B2)
3. Տեղեկացված պահել (A1, A2, B3, B4)
4. Ակտիվորեն ներգրավել և ներազդել (A3, A4, B3, B4)

**Առաջադրանք**

Փորձարկեք այս քարտեզագրումը փոքր խմբերում: Միավորվեք ըստ մոտ համայնքների կամ նույն կոնտեքստի: Առանձնացրեք համայնքային խնդիրներից որևէ մեկը, որ Ձեզ հուզում է և փորձարկեք այս գործիքը:

## Միջամտության պլանավորում

Հիմնախնդրի վերլուծությունից և նպատակի սահմանումից հետո, կարևոր է գնահատել լուծման այլընտրանքները նախքան միջամտության պլանի ընտրությունը: Գնահատել հնարավոր է ըստ մի շարք չափանիշների՝

- Արագություն/ժամանակ
- Ծախսատարություն/անհրաժեշտ ռեսուրսների ծավալ
- Վնասակարություն կամ այլ ռիսկեր
- Մեր կարողություններն ու փորձը

Ի վերջո, ամենից արդյունավետ տարբերակի ընտրությունն երաշխավորելու է առավելագույն արդյունք:
Միջամտության տրամաբանական մոդելը օգտագործում է հետևյալ հասկացությունները՝
**Ազդեցությունը**, որին փորձում ենք հասնել. այն ավելի երկարաժամկետ է և հեռահար, սովորաբար այն մեծ փոփոխությանն է ուղղված, որին ձգտում ենք:
**Արդյունքը**, որը մեզ մոտեցնում է դեպի ցանկալի ազդեցության, ավելի չափելի է, սովորաբար մեկից ավելի արդյունք է պետք, որպեսզի ապահովենք ազդեցություն:
**Արտադրանքը**, որը որոշակի է, հստակ և կարճաժամկետ, մեզ մի քայլ մոտեցնում է դեպի ցանկալի արդյունքի:
**Գործողությունը** այն նվազագույն ակտն է, որը պետք է կայանա, որպեսզի ստեղծվի արտադրանքը:
**Միջոցը** այն ներդրումն է, որն անհրաժեշտ է գործողությունն իրականացվելու համար:

| ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼ | |
|---|---|
| Impact | Ազդեցություն |
| Outcome | Արդյունք |
| Output | Արտադրանք |
| Activity | Գործողություն |
| Input | Միջոց |

Միջամտության տրամաբանական մոդելը վերոբերյալ քայլերի ներքևից վեր հաջորդական կիրառման շնորհիվ հնարավոր է դարձնում որևէ փոփոխություն:

## Ժամանակացույցի կազմում (Գանտի աղյուսակ)

Ժամանակը կարևոր ռեսուրս է, իսկ ժամանակի կառավարումը նախագծերի կառավարման մեջ կարևոր բաղադրիչ է: Գանտի աղյուսակը ժամանակն համահունչ գործողությունները (առաջադրանքները կամ իրադարձությունները) ցուցադրելու ամենատարածված և օգտակար եղանակներից մեկն է: Գծապատկերի ձախ կողմում գործողությունների ցանկն է, իսկ վերևի երկայնքով՝ ժամանակային սանդղակը: Յուրաքանչյուր գործողություն ներկայացված է առանձին տողով, որի երկարությունը արտացոլում են գործունեության մեկնարկի ամսաթիվը, տևողությունը և ավարտի ամսաթիվը: Սա թույլ է տալիս մի հայացքով տեսնել.

- Ինչ գործողություններ են ներառված
- Երբ է յուրաքանչյուր գործունեություն սկսվում և ավարտվում
- Որտեղ է գործունեությունը համընկնում այլ գործողությունների հետ և որքանով
- Ամբողջ նախագծի տևողությունը

Ամփոփելու համար Գանտի գծապատկերը ցույց է տալիս, թե ինչ պետք է արվի (գործողությունները) և երբ (ժամանակացույցը)։

| | շաբաթ 1 | շաբաթ 2 | շաբաթ 3 | շաբաթ 4 |
|---|---|---|---|---|
| | Ե. Ե. Չ. Հ. ՈՒ . | Ե. Ե. Չ. Հ. ՈՒ . | Ե. Ե. Չ. Հ. ՈՒ . | Ե. Ե. Չ. Հ. ՈՒ . |
| **առաջադրանք 1** | | | | |
| գործողություն 1 | | | | |
| գործողություն 2 | | | | |
| գործողություն 3 | | | | |
| **առաջադրանք 2** | | | | |
| գործողություն 1 | | | | |
| գործողություն 2 | | | | |
| գործողություն 3 | | | | |
| **առաջադրանք 3** | | | | |
| գործողություն 1 | | | | |
| գործողություն 2 | | | | |
| գործողություն 3 | | | | |
| **առաջադրանք 4** | | | | |
| գործողություն 1 | | | | |

# Հաղորդակցում

Հաղորդակցումը տարբեր բովանդակության և բնույթի տեղեկատվության փոխանակման գործընթաց է, որը պայմանավորված է տարբեր գործոններով, և որի վերջնական նպատակն է հասնել փոխըմբռնման:

Հաղորդակցումը ուղերձի կամ հաղորդագրության բովանդակությունը կամ իմաստը կազմելու, հաղորդելու և փոխանցելու երկկողմանի գործընթաց է, որի միջոցով կողմերի միջև կապ է հաստատվում: Հաղորդակցումը տեղի է ունենում, եթե կան իմաստը կամ հաղորդակցման միավորը (ուղերձ), հաղորդողը և դրա ստացող(ները): Այս ճանապարհին ուղերձը կոդավորվում (հաղորդողի կողմից) և ապակոդավորվում է (ստաղոցի կողմից), մինչդեռ հաղորդակցման շղթայում կարևոր է նաև շրջակա միջավայրը, որը կարող է առաջացնել այսպես կոչված աղմուկ, ինչն իր հերթին բարդացնում է հաղորդակցումը:

**Հաղորդակցության շրջափուլ**



Մյուս կողմից շղթան ամփոփելու համար կարևոր է ստացողից հաղորդողին հետադարձ կապը:

Քաղաքականության, ջատագովության կամ այլ աշխատանք տանելիս կարևոր է արդյունավետ հաղորդակցումը: Հաղորդակցման լեզուն պետք է հստակ և պարզ լինի, որպեսզի հասկանալի լինի, թե որն է դրա իմաստը, այսինքն հասցեատերը (թիրախային խումբը, ում դիմում ենք) պետք է հասկանա դրա իմաստը: Իսկ դրա համար մենք պետք է լավ հասկանանք թիրախային խմբին, նրա կարողություններն ու շահեր, մասնավորապես՝

- Ինչ գիտեն խնդրի մասին
- Ինչ վերաբերմունք ունեն
- Ինչ շահեր, համոզմունքներ, արժեքներ և հայացքներ ունեն
- Ինչ պետք է իմանան
- Ինչ պետք է անեն:

Թիրախային խմբին ճանաչելը մեզ թույլ կտա մշակել ուղերձներ, որոնք կարտացոլեն նրա շահերը և նույնիսկ կշոշափեն որոշ զգացմունքներ:

# Գնահատում

SWOT վերլուծությունը ռեսուրսների վերլուծության գործիք է: SWOT-ը իրենց ներկայացնում է ուժեղ կողմերի (strengths), թույլ կողմերի (weaknesses), հնարավորությունների (opportunities) և սպառնալիքների (threats) խորքային ուսումնասիրության աղյուսակ, որը օժանդակում է ռազմավարական որոշումների կայացմանը:




Համապատասխանաբար ուժեղ և թույլ կողմերը արտացոլում են ներքին գործոնները, իսկ հնարավորություններն ու սպառնալիքները՝ արատքին: Միևնույն ժամանակ ուժեղ կողմերն ու հնարավորությունները օգտակար ուղենիշեր են, իսկ թույլ կողմերն ու սպառնալիքները՝ վնասակար: Այս վերլուծության շնորհիվ հնարավոր է լինում հասկանալ, թե ինչ ռեսուրսներով և ուղղություններով է հետագայում պետք աշխատել, և որոնք են բացերը, որոնք պետք է լցնել, կամ ռիսկերը, որոնցից պետք է խուսափել:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1. Ոչ ֆորմալ կրթության մեթոդներ և գործիքներ

Խմբային գործընթացների իմացությունը և խմբի հետ աշխատելիս դրանք ճանաչելու կարողությունը թույլ է տալիս առավել արդյունավետ ընտրել աշխատանքի մեթոդները և կազմակերպել ուսուցման սահուն ընթացք:

Ուսուցման մեթոդները ներառում են՝ մոդել, տեխնիկա, գործընթաց, մարտավարություն, ուսուցման նկատմամբ մոտեցում:

Մեթոդաբանությունը կրթական գործընթացի տեսանկյունից ընտրված մեթոդների հիմնավորումն է: Մեթոդաբանությունը ընդհանրական հայացքն է այն բոլոր մեթոդների բազմազանության, որոնք հարաբերվում են կրթական տեսակների հետ:

Ոչ ֆորմալ միջավայրում խմբերի հետ աշխատելիս աշխատանքների ժամանակ առավել արդյունավետ է ինտերակտիվ մեթոդների կիրառումը:

Ինտերակտիվ ուսուցումը ճանաչողական գործունեության հատուկ ձև է, որը իրականացվում է համատեղ աշխատանքի ընթացքում, և որի ժամանակ բոլոր մասնակիցները փոխազդում են միմյանց հետ, գնահատում են իրենց և իրենց վարքը, ներթափանցում են խնդրի լուծման աշխատանքային գործընկերության իրական ոլորտ:

Խմբի հետ աշխատանքի ձև մշակելիս կարևոր է ուշադրություն դարձնել հետևյալ ասպեկտներին.

- որո՞նք են կրթական հիմնական նպատակները
- ինչի՞ եք փորձում հասնել վերջնարդյունքում
- ի՞նչ թեմայի հետ եք աշխատում
- ի՞նչ կապ ունեն միմյանց հետ թեման և դրա մատուցման մեթոդը
- ինչպե՞ս կօգնի ընտրված մեթոդը հասնել նախանշված նպատակին
- ի՞նչ փորձ ունեք նմանատիպ մեթոդների հետ աշխատելու
- Ինչպիսի՞ն է խմբի առանձնահատկությունը, որի հետ դուք աշխատում եք. տարիքային խումբ, գենդերային հարաբերակցություն, խմբի մասնակիցների քանակը, գիտելիքներն ու փորձը, հետաքրքրություններն ու կարիքները և այլն

Հիմնաքարային կարևորությունն այն է, որ ընտրված մեթոդն ուղիղ կապ ունենա թեմայի նախաբանի և վերջնարդյունքի հետ և բխի թեմայի հիմքում ընկած արժեքներից:

Մեթոդների ամբողջական բազմազանությունը պատկերացնելը բարդ է, քանի որ այն մշտապես զարգանում և փոխակերպվում է, սակայն մեթոդները հնարավոր է բաժանել հետևյալ խմբերի.

## Մթնոլորտ ստեղծող մեթոդների օրինակներ

- Էներջայզերներ (ակտիվացնող խաղեր)–փոքր վարժություններ, որոնք նպաստում են ուշադրության կենտրոնացմանը, տրամադրության բարձրացմանը:
- Խմբի ձևավորմանն ուղված վարժություններ (team-building)–սրանք առաջադրանքներ են, որոնք ուղղված են համախմբմանը, համատեղ աշխատանքների կատարմանը:

## Մտքերի գեներացման մեթոդների օրինակներ

- Մտագրոհ–առաջադրված թեմայի շուրջ հնչող բոլոր մտքերի հավաքագրում առանց քննարկումների: Մտագրոհի ժամանակ խմբի անդամները ազատ փոխանակվում են իրենց գաղափարներով այնպես, որ յուրաքանչյուրը կարողանա զարգացնել մեկ ուրիշի գաղափարը:
- Պրոյեկցիոն մեթոդ-խմբի անդամների «մտովի տեղափոխում» որևէ իրավիճակ (օրինակ 10 տարի հետո, որտեղ հնարավոր է տեսնել ցանկալի փոփոխությունները):
- Երազանքի սեսիա (Dream sessions)–մտքերի գեներացման գեղարվեստական մեթոդ է, երբ հնարավոր է նկարել մտահղացումը կամ պատրաստել այն ձեռքի տակ եղած իրերից: Առավելապես այս մեթոդի մեջ կարևորվում է անհատական աշխատանքը,

որը խթանում է աշխատանքին գեղարվեստական և ստեղծագործ մթնոլորտի ստեղծումը:

## Քննարկման մեթոդների օրինակներ

- Դիսկուս (զրույց)-քննարկվող հարցի մասին ֆասիլիտացվող զրույց, որը նախատեսում է բոլոր դիտանկյունների քննարկում: Կոնկրետ խնդրի կամ իրավիճակի վերաբերյալ նպատակադրված կոլեկտիվ քննարկում, որը ուղեկցվում է փորձի փոխանակմամբ, նոր մտքերով, վերլուծություններով:
- Քննարկում խմբում- որևէ հարցի խմբային քննարկում ուղղված իրականության ընկալմանը կամ փոխըմբռնմանը: Խմբային քննարկման տարատեսակ է կլոր սեղան քննարկումը:
- Փոքր խմբերում աշխատանք-որևէ հարցի վերաբերյալ պատասխան գտնելուն ուղղված աշխատանք փոքր խմբով (2-7 հոգի):
- Բանավեճ (դեբատ)-հատուկ կազմակերպված և հստակ պլանավորված մտքերի հանրային փոխանակում երկու  կողմերի միջև որևէ ակտուալ հարցի վերաբերյալ: Սա հանրային քննարկման տարատեսակ է, որի նպատակը ոչ թե միմյանց, այլ երրորդ կողմին իրենց սեփական ճշմարտացիությունն ապացուցելն է: Այդ իսկ պատճառով մասնակիցների կողմից օգատգործվող վերբալ և ոչ վերբալ միջոցները նպատակ ունեն լսարանի մոտ առաջացնել մատնանշված

հարցի շուրջ որոշակի վերաբերմունք:

- Վիճաբանում (դիսպուտ)-համընդհանուր ընդունելի և միանշանակ լուծում չունեցող հարցի խմբային քննարկում: Դիսպուտի կարևոր առանձնահատկությունն է նախապես սահմանված կանոնների և թեմայի պահպանումը:
- Լուռ հատակ (silent floor)-ընդհանուր լսարանի աշխատանքների արդյունքների գրավոր ներկայացում և գրավոր կարծիքների հավաքագրում այդ աշխատանքի վերաբերյալ:
- Աշխարհի սրճարան (word cafn)-առաջադրված ձևաչափի մեջ փոքր խմբերի հաջորդական աշխատանք որևէ թեմայի շուրջ, փոխլրացնող, «կենդանի ցանցի» ստեղծում:

## Գործնական փորձառության զարգացման մեթոդներ

- Թրեյնինգ (անգլերեն training, train բառից՝ ուսուցում, դաստիարակություն)-ակտիվ ուսուցում՝ ուղղված գիտելիքների, հմտությունների զարգացմանը և սոցիալական վերաբերմունքի ձևավորմանը:
- Դերային խաղ-ուսումնասիրման ենթակա իրավիճակի պատում, որի շրջանակներում խմբի անդամները «մտնում» են ուրիշի կերպարի մեջ:
- Գործնական խաղ-իրավիճակի պատկերում, որն առավելապես մոտ է այն իրավիճակին, որում

գտնվում են մասնակիցները, որտեղ մասնակիցները խաղում են իրենց իսկ դերը: Տարբեր մասնագիտական միջավայրերի մոդելավորումը նպատակ ունի հանգեցնելու նոր ուղիներ որոնման:

- Վարժություններ-պրակտիկ առաջադրանքներ, որի շրջանակներում ձեռք են բերվում անհրաժեշտ կարողություններ:
- Դաշտային աշխատանքներ-աշխատանքային առաջադրանքների կատարում փորձարարական խմբի մասնակցությամբ:

## Գիտելիքի փոխանցման մեթոդներ

- Քվեստ-նախապատրաստված քարտեզով տեղեկատվության փնտրում: Նախատեսում է որոշակի առաջադարքնների կատարում, որի մրցանակը հաջորդ կտոր տեղեկատվության տրամադրումն է:
- Ինտերակտիվ ներկայացում - նյութի պրեզենտացիա, որի շրջանակներում բովանդակությունը լրացվում է մասնակիցների կողմից:
- Կենդանի գրադարան-կենդանի շփման կազմակերպում տեղեկատվության կրողների հետ:
- Մասնակիցների միջոցով պրեզենտացիա-խմբի անդամների միջև տեղեկատվության ներկայացման բաժանում:

## Խոչընդոտների հաղթահարման մեթոդների օրինակներ

- Կոլեկտիվ գնահատում-մի մասնակցի կողմից խնդրի ներկայացում և մյուսների կողմից իրավիճակի լուծումների առաջարկում, խորհուրդներ:
- Դրամա-թատերական մեթոդներով իրավիճակի վերապրում:
- Քոուչինգ-հատուկ խորհրդատվության տեսակ փոքր խմբերի համար, որի ժամանակ մասնակցին տրվում է հնարավորություն ինքնուրույն պատասխաններ գտնելու և զարգանալու: Քոուչինգի հիմնական գործիքը համարվում է հարցադրումը:
- Քեյս մեթոդ-կոնկրետ իրավիճակի վերլուծություն, խնդրահարույց իրավիճակի ակտիվ վերլուծություն՝ հիմնված հստակ առաջադրանքների լուծման ուսուցման վրա:Քեյս մեթոդն իրենից ներկայացնում է ուսումնասիրություն, վերլուծություն և իրավիճակային որոշման կայացում:
- Վերլուծական գործիքներ-իրավիճակի վերլուծություն ըստ առաջադրված վերլուծության տեխնիկայի (օրինակ՝ SWOT վերլուծություն, PESTEL վերլուծություն և այլն):

## Արտացոլման մեթոդների օրինակներ

- Օրագրեր-դիտարկումների, ապրումների, եզրակացությունների գրանցումներ:
- Տեսողական գնահատում-տեղի ունեցող իրադարձությունների գնահատում շարժումների, նկարների կամ նշանների օգնությամբ:
- Պորտֆոլիո (տեսադարան) մեթոդ-կրթական և մասնագիտական գործունեության արդյունքների վավեր, իսկական գնահատման մեթոդ:

Շատ մեթոդներ հաջողությամբ կիրառվում են ոչ միայն բերված օրինակների կոնտեքստում, այլև հաջողությամբ համակցվում են և լրացնում են միմյանց:

Կարևոր է նաև հիշել, որ նշված մեթոդներն ունեն իրենց առցանց փոխակերպումները, որոնք հնարավոր են դարձնում նաև մեթոդների հեռավար կիրառումը:

# Հավելված 2. Իրավական հենանիշներ և խորհուրդներ թիրախ խմբի համար

## Իրավական հենանիշներ

Գործող ՀՀ օրենսդրությունը, չնայած որոշ իրավական բացերի առկայության, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, բավական նպաստավոր է վաղ ամուսնությունների բացասական պրակտիկայի կանխարգելման հասնելու համար:

Թեև եզդիական համայնքում վաղ ամուսնությունների հիմնախնդրի առկայությունը շարունակում է գլխավորապես պայմանավորված լինել իրավակիրառ պրակտիկայում առկա թերացումներով և խնդիրներով, սակայն այն նաև իրավական մշակույթի խնդիր է, որն առկա է թե՛ եզդիական համայնքի, թե՛ որոշում կայացնող պետական մարմինների և պաշտոնյաների շրջանում:

Կարևոր է, որպեսզի վաղ ամուսնությունների բացասական պրակտիկայի դեպքերի արձանագրման ժամանակ իրենց աշխատանքային գործունեության ընթացքում հանրային ծառայողները որպես ելակետ ընդունեն այն իրավական կարգավորումները, որոնք կան ՀՀ օրենսդրությամբ և հետևողական լինեն դրանց օրինական իրացման գործում:

Առանձնացնենք այդ իրավական հենանիշներից ամենաէականները.

## ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հոդված 10

*1. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:*
*Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:*

## ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 200. Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ

*1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձի նկատմամբ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ, 198-րդ կամ 199-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝*

*առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*
*2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝*
*1) 12-ից 14 տարին չլրացած անձի նկատմամբ,*
*2) մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,*
*3) մի խումբ անձանց կողմից կամ*
*4) առանձին դաժանությամբ՝ պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:*
*3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝*
*1) կատարվել է վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն կամ*
*2) անզգուշությամբ առաջացրել է առողջությանը ծանր վնասի պատճառում կամ հոգեկան խանգարում կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:*
*4. Սույն հոդվածով նախատեսված սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կա-*

*ոիքները բավարարելը, միևնույն անձի կողմից միևնույն անձի նկատմամբ մեկից ավելի անգամ կատարելը որակվում է որպես մեկ հանցագործություն:*

## Ընդհանուր խորհուրդներ

Ժողովրդավարական և բազմամշակութային հասարակություններում շատ կարևոր է հասարակության բոլոր շերտերի, հատկապես խոցելի խումբ համարվող էթնիկ կամ ազգային փոքրամասնությունների իրավունքների արդյունավետ պաշտպանության կարևորության գիտակցումը, ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին իրազեկման բարձրացումը ինչպես հանրության, այնպես էլ որոշում կայացնող պետական մարմինների և պաշտոնյաների շրջանում:

Կարևոր է, որ ազգային փոքրամասնությունների հետ աշխատող հանրային ծառայողները իրազեկված լինելով վերջիններիս իրավունքներից, ցուցաբերեն առավել զգայուն մոտեցում նրանց խնդիրներին արձագանքելու կամ որոշումներ կայացնելու ժամանակ:

Կարևոր է, որ պետական մարմինները «ձերբազատվեն տիրապետող այն կարծիքից, թե չարժե խառնվել կամ միջամտել եզդիների կյանքին, կամ որ նրանց խնդիրները պետք է լուծվեն ոչ թե իրավունքի և օրենքի հիման վրա, այլ համայնքի ներսում:

Այդպիսի մոտեցումը նպաստում է, որ վնասակար պրակտիկաները ավանդույթի անվան ներքո գերիշխեն իրավունքի և օրենքի նկատմամբ: Մինչդեռ միջազգային իրավունքը սահմանում է, որ թեև մշակութի և ավանդույթի դերը մեծ է, սակայն հակասությունների դեպքում առաջնահերթությունը պետք է տրվի մարդու իրավունքներին:

Կարևոր է հաշվի առնել, որ եզդիական համայնքում վաղ ամուսնությունների դեպքերի ծանրակշիռ մեծամասնությունը տեղի է ունենում փաստացի ամուսնության կնքմամբ և այդ ամուսնությունները չեն գրանցվում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում: Այս պրակտիկան ըստ էության ավելի է բարձրացնում խոցելիությունը: Եվ քանի որ չկա գործող արդյունավետ մեխանիզմ, ինչը հնարավորություն կտա այդ ամուսնությունները հայտնաբերել վաղ փուլում և կանխարգելել երեխաների իրավունքների ոտնահարումները, որպես հետևանք եզդիական համայնքի շատ անչափահաս աղջիկներ դուրս են մնում դպրոցից և հետագայում էական խնդիրների են բախվում առողջապահական և այլ պետական ծառայություններ մուտք գործելու հետ կապված[22]:

---

*22 Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, Հայաստան, 40-րդ պարբերություն, un.org/doc/UNDOC*

# Օժանդակ գրականություն


1. Ինչ են իրենցից ներկայացնում մարդու իրավունքները՝ www.unicef.org/armenia/
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, www.ohchr.org/sites/
3. Մարդու իրավունքների միջազգային շրջանակ www.unicef.org/armenia/
4. Միջազգային դաշնագիր Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին www.arlis.am
5. Տնտեսական սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր www.arlis.am
6. Կոնվենցիա Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ www.arlis.am
7. Կոնվենցիա Երեխայի իրավունքների մասին www.arlis.am
8. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա www.irtek.am
9. Կոնվեցնիցա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին www.arlis.am
10. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, www.e-draft.am

11. Ձեռնարկ Հայաստանի եզդիաբնակ համայնքներում ծրագրեր իրականացնող ՀԿ-ների համար. Մշակույթ, իրավունք, օրենսդրություն: Մարդու իրավունքների եզդիական կենտրոն, 2020 yezidirights.org/pdf
12. Խաղաղաշինական կրթություն, Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում ՀԿ, www.frontlineyouth.net
13. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ, Հայաստան, 40-րդ պարբերություն un.org/doc/UNDOC
14. Human Dignity and Human Rights, p. 10, legal-tools.org.pdf
15. Minority Rights,Will Kymlicka, academia.edu/MinorityRights2018
16. Salto Youth. Intersectionality: an approach to Empower women at the Crossroads salto-youth.net
17. Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities. Fourth Opinion on Armenia. rm.coe.int/16806f7f70

Kingdom of the Netherlands

*Շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Նիդերլանդների Թագավորության Դեսպանատանը՝ եզդիական համայնքում վաղ ամուսնությունների կանխարգելման ուղղությամբ «Մարդու Իրավունքների Եզդիական Կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագծերին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար, միևնույն ժամանակ շնորհակալություն ենք հայտնում նաև ՄԻՊ գրասենյակին, և ՀՀ պատասխանատու պետական գերատեսչություններին և ՔՀԿ ներկայացուցիչներին՝ վաղ ամուսնությունների կանխարգելման աշխատանքներում ներդրած ջանքերի և արդյունավետ համագործակցության համար:*

© «Մարդու Իրավունքների Եզդիական Կենտրոն»
իրավապաշտպան ՀԿ, 2022թ.

# Ուսումնաօժանդակ ձեռնարկ ազգային փոքրամասնությունների հետ աշխատող մասնագետների համար.

***Ձեռնարկը կազմեցին՝***
*Լուսինե Քոսակյանը*
*Սաշիկ Սուլթանյանը*
*Մուրազ Շամոյանը*

© «Մարդու Իրավունքների Եզդիական Կենտրոն»
իրավապաշտպան ՀԿ, 2022թ.